




三

三



-6 NOV 2011

ՆՅԱԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՃՈՐՋՈՂԻ ԳԻՐՔ

ՊԵՐԵ ՊՈՌԵՅԱՆ

1857 - 1907



ՅԵՐԵՎԱՆ - 1937

891.99.09 Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

5-96

Ա. Հ.

ՊՈՌԵՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

ՀԱՄԱՐՈՒԹ ԱԿՆԱՐԿ



ՊԵՏՎՈՒԹ  
ՀԿՅԵՄԿԿԻՑ ՄԱՆԿՈՒՏ ԳՈՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԲԻՒ

09.07.2013

Գառա իմբարդիք՝ Ար Զարյան  
Հեղինակի պորտրեն, անվանաթերթերը և տեխ. լուս.  
Քառողաբյանի  
Սրբագրիչ Ս. Շահբազյան



1311

37



Պերճ Պոռչյան

Յեկ թող ապլի անմահ փառքով,  
Ով զոր ցավը թույլ թշվառի  
Կարեկցության հզոր խոսքով,  
Դարձնում ե ցավն իր աշխարհի:

ζηψή· θετικών

Պերճ Ստեփանի Պոռշյանը ծնվել ե Աշտարակում, 1837 թվին հունիսի 3-ին։ Նրա իսկական անունը Հովհաննես ե, ազգանունը՝ Տեր-Առաքելյան։ Իրեն համարելով սերած Գյառնու նահանգի Պոռշ իշխանի տոհմից՝ վերանվանվել ե Պոռշյանց։ Պերճ անունը կապված ե առաջին բանաստեղծության տպագրության հետ։ Վիպասանի հայրը՝ դերձակ Ստեփանը՝ գյուղի վերջին չքավորներից եր։ Նա ասեղով ու պտղուցով եր հայթայթում իր ընտանիքի ապրուստը։ «Հայրս դերձակ ե յեղել և մայրս նրա ոգնականուէին։ Իմ ամենախոր հիշողությունը հասնում ե մինչև հօրս մկրատը, կիսագաղը և ընկույզի գաղգրահը» պատմում ե վիպասանը «Հուշիկներ»-ի մեջ։ Դերձակ Ստեփանի միակ սեփականությունը փոքրիկ այգին եր, և մեկ ել անլույս ու խոնավ խրճիթը։ Պոռշյանների հին տունը,

1) «Մեղող Հայաստանի» լրագրի 1859թվի № 16-ում տպագրը - ված Պողոյանի անդըանիկ բանաստեղծությունը՝ «Առ անձկալին Շուշան գուստը Վարդանա» ստորագրված և Հովհաննես (նույն Պերճ) Պող Աշտարակեցի, Հաջորդ տարին (1860թ.) «Կոռուն կա-ում տպագրված «Սոս և Վարդիթեր» վեպը ստորագրված և Պերճ Պողոյան:



ուր ծովիլ և մանկության տարիներն եւ անցկացրել Հովհաննեսը, այսոր ել դեռ պահպանում եւ իր կիսախարխուլ գոյությունը՝ հին Աշտարակի մի հետ ընկած թաղում:

Ստեփանը յեղել եւ սիրող և հոգատար հայր: Նա միաժամանակ ուսումնասեր մարդ եր: Զկարողանալով կրթության տալ ավագ վորդուն՝ Խուբովին, խիստ մտահոգված եր կրտսեր վորդու վիճակով:

Յոթնամյա Հովհաննեսի համար նա ձեռք եւ բերում Զմբունիայում հրատարակված, պատկերազարդ և մանկավարժական նոր մեթոդներով կազմած այբբենարան: Յեղբոր ոգնությամբ Հովհաննեսը յերկու շաբաթում սովորում եւ կարդալ—զբեկ: Այդ ժամանակ Աշտարակում գեռես դպրոց չկար, և ահա Ստեփանը միտք և հղանում գյուղում դպրոց հիմնել: «Մինչև մի կանոնավոր ուսումնարան բաց չանեմ, չեմ հանգստանալ—միշտ կրկնում եր նա—բերանիս թիքեն կկտրեմ ու ես պստիկին գոնե մարդ կշինեմ»: «Պստիկը» Հովհաննեսն եր, գերձակ Ստեփանի կրտսեր վորդին: 1845 թվին Ստեփանը աշտարակցիների հանձնարությամբ Վաղարշապատից հրավիրում եւ «հրաբունի», «փիլիսոփա» Շապուհ Շահնազարյանցին: Վարժապետ Շապուհի 70 աշակերտներից մեկն եւ դառնում Հովհաննեսը, ամենափոքը և ամենաառաջադեմը դպրոցում: Մահակի և ոռոգու դպրոց եւ անվանում Պոռշյանը այդ դպրոցը, ուր յերեխաներն ավելի ծեծ ու հայուանք եյին ստանում, քան գիտություն: Պոռշյանին ևս առատ բաժին եւ ընկել Շապուհի բարբարոսություններից: Նրա արտակարգ ընդունակությունները և առաջադիմությունը չեն փրկել նրան ծեծից և պատժից: «Ճամանակոր ճղնիկներ ամեն աստծու տված որ փշը»

վում եյին ազդբներիս փափուկ մսերի վրա: Զարությունս վոչ այլ ինչ եր, յեթե վոչ մանկական անմեղ և աշխատ խաղեր («Հոռշիկներ»): Մի այլ տեղ Պոռշյանը գրում եղանությամբ. «Մովզի եյին տալիս ամեն որ մովզովները ուամիկին, ոռոգի եյին տալիս Եղմիածնի գպրոցից դուրս արած կամ զուրս յեկած ու գյուղերը ցըլած խալֆեքը իրենց աշակերտներին»:



Պոռշյանների տունն Աշտարակում

Այս շրջանում ե, փոր Պոռշյանը միակ անգամ իր կյանքում տեսնում ե Աշտարակ յեկած Յերևանի արքունի գալվառական դպրոցի վերատեսուչ Խաչատուր Արովյանին: Իննամյա Հովհաննեսը Արովյանին զարմացնում ե իր սուր հիշողությամբ, համարձակ, սրա-

միտ և խելացի պատասխաններով և արժանանում են  
նրա փաղաքշանքներին:

«Հոռշիկներ»-ում Պոռշյանն այսպես է նկարագը-  
րում Աբովյանի հետ ունեցած իր հանդիպումը.

«Ազան բարեկեց, հետո նստեց խալիքա Շաղուհի  
միակ հասարակ փայտյա աթոռի վրա և մատով ինձ  
յուր մոտ կանչեց ու հարցրեց.

— Բնչի՞ համար դու փոքրիկ ես ու քո հասակա-  
կիցներին թողած՝ մեծ տղայց մոտ, բոլորի ծայ-  
րումն ես նստել յերեկ մեծերը քո դասըդ սերտաց-  
նում են հմատ:

— Մեղք կլինի՞, վոր ասես՝ իս եմ նրանց չկիտցա-  
ծը գլխի ձգում, առաջին աշակերտն եմ, հանդգնաբար  
պատասխանեցի յես:

— Վանց թե դու յես առաջին աշակերտը, զար-  
մացմամբ ու քնքշաբար առաջ քաշեց, յերկու ծնկնե-  
րի մեջ առալ ինձ ու հարցրեց աղան. դու գեռ մի  
թիզ չկաս, ահագին ահագին մազ ու միրուքով աղա-  
մարդկանց առաջինն ես:

— Կուզես՝ խալֆիս հարցրու:

— Հրաման քեզ, վողորմած տեր, դա մեր առա-  
ջին աշակերտն ե, հաստատեց Շարո խալֆան:

— Բնը՝ լավ, ապրիս, գլուխս շոչեց աղան և հարց-  
րեց.

— Յեթե դու առաջին աշակերտն ես, ասա տես-  
նեմ՝ հաց ու պանիր կարդացել ես:

— Հաց ու պանիր ամեն որ ուտում եմ, դու մեծ  
մեծ քաներ ասա:

— Վոր եղակս ե, գնա գիրքդ բեր տեսնեմ:

— Միթե դու քերականություն ես սովորում,

ստուգիվ աչքերը չուց աղան և հարցասիրաբար նայեց  
ուսուցչին:

— Այն, աղա, դրա փոքրությանը մի նայեք, Զամ-  
չյան քերականության առաջին մասը վերջացրել ե  
և ամենքից լավ սովորում ե, պնդեց վարժապետը:

Աբովյանը ընդամենը յերեք որ ե մնում Աշտարա-  
կում, բայց չլսված և չտեսնված բարեփոխություն-  
ներ ե մտցնում խալիքայական գլուցում: Վերաց-  
նում ե ծեծը, որվա շոգ ժամերին դադարեցնում ե  
դասերը, դասամիջոցին և պարապմունքներից դուրս  
աշակերտների հետ խաղեր ու զբոսանքներ ե կազմա-  
կերպում, յերեկոյան պահին առաջնորդում ե գետը  
լողանալու, ինքն ել լողալով նրանց հետ: Այս բոլորը  
արտասովոր բաներ եյին Շապուհ Շահնազարչանցի  
աշակերտների համար, բայց ամենից ավելի արտա-  
կարգն ու զարմանալին աշակերտների նկատմամբ ու-  
նեցած Աբովյանի սիրալիր և փաղաքուշ վերաբեր-  
մունքն եր: Փոքրիկ չովհաննեն ու իր ընկերներն  
առաջին անգամ իրենց կյանքում հանդիպում եյին  
մի մանկավարժի, վորը վոչ միայն չեր պատժում,  
չեր հայնոյում, չեր սպանում, այն գուրգուրում եր,  
փայփայում, սիրում հայրաբար: Աբովյանի այցելու-  
թյունը Աշտարակի գլուցին, անջնջելի տպագորու-  
թյուն և թողել Պոռշյանի վրա: Աբովյանի անձնավո-  
րության նկատմամբ ունեցած հայցմունքի, դպրոցում  
մտցրած նրա բարեփոխությունների, աշակերտների  
հանդեպ ցուցաբերած փայփայանքի, մտերիմ և սի-  
րալիր վերաբերմունքի մասին Պոռշյանը շատ անգամ  
ե խոսել: «Արձագանք»-ում տպված «Գյուղական վար-  
ժապետները» խորագիրն ունեցող հիշողության մեջ

Արովյանին համեմատելով՝ Աշտարակի կիսագրագետ տիրացու—վարժապետներին, նաև վեր և հանում առաջինի մեծ արժանիքները և խարազանումու ծաղրում եւ վերջիններին:

Արովյանի այցելությունից հետո Շապուհը գյուղում և դպրոցում իր «մանկավարժական» վարկը ընկած տեսնելով, հեռանում եւ Աշտարակից: Դպրոցը փակվում եւ Մոեփանը 1849 թվին Հովհաննեսին հանձնում եւ Մողնու վանքի միտրան Մարտիրոս Մժեժյանցի նորաբաց վանական դպրոցը: Այստեղ ևս շուտով Հովհաննեսը դառնում եւ առաջին աշակերտը: Ստեփանը մեռնելիս Մժեժյանին եւ հանձնարարում տնօրինելու իր սիրելի վորդու բախտը: «Հայր սուրբ, իմ վորդուն քեզ եմ հանձնում, քեզ ել աստծուն, կուզես մարդ շինի, կուզես՝ Հուրը գցիր» («Հուշիկներ»): Այստեղ նա սովորում եւ յերկու տարի: Հոր մահը Հովհաննեսին թողնում եւ բախտի քմահաճույքին: Ավագ յեղբայրը հազիվ հոգում եր ընտանիքի ծով կարիքը: Հոր թողած ժառանգությունը միայն 300 ռուբլի պարտքն եր: Հովհաննեսի ուսման հոգսը յեղբայրը հանձն առնել անկարող եր, իսկ նրա մեջ վառվում եր ուսման անհագ ծարագիր: Այդ տենչը մղում եւ նրան իրագործելու մի խիզախ ծրագիր. 1851 թվի աշնանը իր ուսուցիչ Մժեժյանի առաջնորդությամբ մորից և ավագ յեղբորից ծածուկ, Կերձը փորձում եւ փախչել արտասահման՝ Պոլսում կամ Փարիզում կրթությունը շարունակելու մտադրությամբ: Սակայն իր անզգության հետևանքով փախուստի ծրագիրը բացվում եւ խափանվում:

Ներսես հիսգերորդ կաթողիկոսը (Աշտարակեցին)

կամենալով մանրամասն տեղեկանալ Մժեժյանցի փախուստի մասին, Եջմիածին և բերել տալիս Հովհաննեսին, Աչքաբաց պատանին գրավում եւ կաթողիկոսի ուշագրությունը: Հետագայում նրանից լավ հոգեուրական պատրաստելու ակնկալությամբ, կաթողիկոսը վորդեզրում եւ ընդունակ և ուսումնածարակ Պոռշյանին և նույն ձմեռը, 1852 թվի հունվարին ուղարկում եւ Թքիլիսիի Ներսիսյան դպրոցը: Պոռշյանը չտեսնված առաջադիմություն եւ ջանասիրություն եւ ցուցաբերում: Կարճ ժամանակից նա դառնում եւ բոլորի ուշագրության առարկան: Մի տարում մեջ եւ տալիս յերկու նախապատրաստական դասարանները և անցնում առաջին դասարանը, իսկ վեց ամիս հետո փոխադրվում եւ յերկրորդը: Պոռշյանի Ներսիսյան դրագությունը յեղած տարիները այդ դպրոցի համար բարեփոխությունների և այդ առթիվ ծագած պայյքարի տարիներ ելին: Դա իր ժամանակում նշանավոր մանկավարժ Պետրոս Շանշյանի տեսչության շրջանն եր: Դպրոցում մտցրած նրա կարգերը մեծ դժգոհություն առաջացրին պահպանողական հոգաբարձուների և ուսուցիչների մեջ: Այդ դժգոհությունները խորացան և վերածվեցին լուրջ պայյքարի՝ ընդեմ Շանշյանի և նրա մանկավարժական մեթոդների: Պայյքարի մեջ ընդգրըկվեցին նաև դպրոցի բարձր դասարանների աշակերտները: Պոռշյանը նույնպես շանշյանական եր: 1855 թվի մայիսին փայլուն կերպով տալով ավարտական քննությունները, նա վերջացնում եւ գործոցը յերրորդ դասարանից, ստանալով վորպես առաջին կարգի մըրցանակ՝ «Ճառք Կիկերոնի յաղագս պատշաճից» գիրքը հետեւյալ մակագրությամբ՝ «Մըրցանակ առաջին կարգի

վասն գերազանց ջանասիբության, հառաջադիմության  
և պարկեցու վարուց»:

Յերկար ժամանակ զպրոցի վարչությունն ավար-  
տող աշակերտներին բաց չի թողնում այն հուսով,  
վոր առաջիկա սեպտեմբերին կրացվի հետեւյալ չոր-  
քորդ դասարանը: Նոր դասարան չի բացվում և Պոռշ-  
յանը 1856 թվի հունվարին վերջնականապես թողնում  
է դպրոցը:

Դպրոցն ավարտելուց հետո Պոռշյանի համար սկս-  
վում են ծանր որեր: Ներսիսյան զպրոցի նպատակն  
եր աչքի ընկնող, առաջադեմ աշակերտներից պատ-  
րաստել յիկեղեցու սպասավորներ: Պոռշյանը, վոր,  
Աղայանի վկայությամբ, չուներ իր նմանը դպրոցում,  
վորին բոլորը մատով եցին ցույց տալիս, հրաժարվում  
ե կրոնավոր դառնալուց: պարզ ե, վոր Ներսես Աշտա-  
րակեցին դրանից հետո հաշտ աչքով չեր կարող նայել  
հանդուգն սանին: Այդ անցքը Պոռշյանը հետեւյալ  
կերպ ե նկարագրում:

«Հերթը հասավ ինձ, յես տեղիցս չշարժվեցի:

—Ի՞նչ ես կանգնել, մնատ արի, գոչեց կաթողիկոսը

—Վհչ, յես ուրար չեմ ուզում, յես քահանա դառ-  
նալու ցանկություն չունիմ, ասացիու կանդնած մնացի:

—Վնաս չունի, չես կամենում, չենք տալ, զոռով  
արջին կամ լծել չի լինի, ասաց ծիծաղելով կաթողի-  
կոսն ու հետեւյալին կանչեց:

Վոչ վոք վոչինչ չնկատեց, իսկ յես հասկացա, վոր  
կաթողիկոսն ինձանից սրտամիա յեղալ, թեև վոչինչ  
չցույց ավեց, յես սխալված չեյի»:

Ներսես Աշտարակեցին դարձացած այն բանից, վոր  
Պոռշյանը չկամեցավ «ուրար» հագնել, հոգեորական

դառնալ, չուզեց այնուհետև ճանաչել իր նախկին վոր-  
դեգրին: Պոռշյանը մնաց վորք ու անխնամ, անա-  
պատահան: Մերթ այս, մերթ այն ծանոթի տանը մի  
կերպ գլուխ պահելով, նա յերկար ժամանակ մի կերպ  
քարշ եր գալիս: Սակայն վոչ մի խնդիր ու միջամտու-  
թյուն չմեղմեց կաթողիկոսի բարկությունը: Կամ ակոր  
հոգեորականը ցանկացավ այնուհետև Պոռշյանին նյու-  
թապես ոգնել, ուստի վերջինս թբիլիսիի գիմնազիա-  
յում կրթությունը շարունակելու հնարավորություն  
չունեցավ: Նա միայն յերեք ամիս հաճախեց գիմնա-  
զիա, վորպես ազատ ունկնդիր, վորից հետո, ստիպված  
յեղավ թողնել ուսումը:

«Հուշիկներ»-ում նա այսպես ե նկարագրում իր վի-  
ճակը: «Յեվ այսպիս, յերեք ամիս ե, վոր յես գիմնա-  
զիայի ունկնդիր եմ, փող չունեմ, միջոց չունեմ, դա-  
սական պիտույքի անհրաժեշտություն կա, Ներսես  
կաթողիկոսը բարկացած ե, չի տալիս, ինչ անեմ: Մո-  
ւորվել պաշարվել եմ, գործ չի առաջ գնում, յեթե  
այսպես շարունակվի, յերեք չեմ կարող քննություն  
տալ»: Թբիլիսիում կրթությունը շարունակելու հույսը  
կորցրած, հաշտվելով թերում մնալու մտքի հետ, Պը-  
ռոցյանը վորոշում և մտնել աշխատանքի: Շանշյանի  
խորհուրդով նա ընտրում ե մանկավարժական ասպա-  
րեց: Այս բնագավառում Պոռշյանը յերկարամյա և  
արդյունավոր աշխատող ե յեղել: Նա առաջադիմա-  
կան, վերանորոգչական ահազին գործ ե կատարել  
հայկական դպրոցի պատմության մեջ, լինելով խալի-  
ֆալական դպրոցի գեմ առաջին պատքարողներից մե-  
կը: Անուրանալի յե հատկապես այն խոշոր դերը,  
վոր կատարել ե Պոռշյանը վորպես աղջկանց դպրոց-

Ների առաջին հիմնող ամբողջ կովկասում: Վորովիս վերանորոգիչ մոտ 45 տարի տեղող իր մանկավարժական աշխատանքների ընթացքում նա հարցուրավոր դժվարությունների յի հանդիպել, հալածվել եւ հայ կղերից և կղերամիտներից, լիբերալ մամուլի խմբագիրներից ու զբչակներից, սակայն միշտ հավատարիմ և մնացել ժողովրդական լուսավորության գործին: Նրա բազմաթիվ ձեռնարկությունները խափանվել են, բայց կամքի արտակարգ ուժով և գործունեցության բացառիկ յեռանդով զինված, նա յերբեք չի ընկճվել: Հալածվելով մի վայրից, անցել եւ մի այլ վայր, ամենատեղ իր հետ տանելով նոր և թարմ մաքեր, ամենուրեք ծավալելով յեռանդ ու գործունեցություն:

1856 թվի ամառը Պոռշանը վերադառնում եւ Աշտարակ ուր խորը կարիքի մեջ ապրում եյին նրա մայրը, յեղայրը և յերկու քուլը: Նրանց վրա ծանալացել եր դերձակ Ստեփանի թողած պարտքը, վորմիայն տոկոսն եին վճարել, վաճառելով պարտեզն ու մարտքը: Մի փոքրիկ աչքու բերքով չորս հոգի հազիվ եյին ապրում: և ահա 19-ամյա Պերճը հայրենի գուշում առաջին անդամ վոտք եւ դնում ուսուցչական ասպարեզ, վորպեսզի թեթեացնի ընտանիքի նյութական ծանը վիճակը:


Այդ ժամանակ Աշտարակում գործում եր տիրացու Հովհաննեսի դպրոցը: Դա մի խալիֆայական դպրոց եր, Սկզբում Պոռշանն ընկերանում եւ նրան, վորպես ուսուց լեզվի դասաւու, բայց տիրացուն տեսնելով ընկերակցի մատագոր գերազանցությունը, չկամենալով «գիտնական» Պոռշանի հետ աշխատել, թողնում է դպրոցը: Պոռշանը գործում եւ բարեկարգել դպրո-

ցը: Նա վերացնում եւ ծեծը, դասավանդման նոր ձևեր և մտցնում: Կարձում եւ ամերող որը տեղող պարապմունքի ժամերը, ստեղծում եւ հոգաբարձություն և այլն: Սակայն շուտով ծնողների մեջ զժոհություն եւ առաջացնում հատկապես ծեծի և պատիժների բացակայությունը: «Գիտես ինչ կա, վարժապետ, վճռապես ասաց Շամոն (դպրոցի հոգաբարձուն), յեթե դու մեր յերեխաներին ծեծես, մենք քեզ վորդի չենք թողուլ, չովհաննես վարժապետն ենտեղ պատրաստ ե»: («Հուշիկներ»): Այս խոռըերից Պոռշանն արտասվում եւ: «Յերկուսից մեկը, կամ պետք եւ հացից զրկվեյի, կամ գաղափարից: Խոստովանում եմ, վերջինը զոհեցի, առաջինին, թեպետ և շատ իզուր: Յերեք տարվա ամբողջ աշխատությանս վարձը հարյուր մանեթի հազիվ հասավ,—ասում ե Պոռշանը իր ձեռադիր «ինքնակենսագրության» մեջ\*): Բարոյական և նյութական խիստ ծանը հարվածներ կրեց Պոռշանն այստեղ: Դըգոն իր հայրենակիցներից, խոռված հոգով, յերկու տարի Աշտարակում պաշտոնավարելուց հետո զրպանում միայն ութ ուրեմի, նա թողնում և մեկնում ե Թբիլիսի: Այստեղ նա ծանը, սովատանջ որեր ե անցեկացնում, ապրելով որական հինգ կոպեկով: Հինգ կոպեկի հացը չորս մասի յեր բաժանում և որը չորս անգամ մեկական կտոր ուտում, վրայից ել մի բաժակ ջուր եր խմում և ալսակն անցկացնում որերը: Հյուծված կիսասով կյանքից, նա ծանը հիվանդանում եւ: Վերջապես նա հայոց լեզվի ուսուցչի և վերականցուի պլատոն և ստանում Նիկողայոս Տեր-Հակոբյանցի նորաբաց մասնավոր դպրոցում, կարճ ժամա-

\* ) Զեռագիրը գտնվում է Պետական Ֆրական թանգարանում:



Նակից հետո՝ նաև ոռւսաց լեզվի դասեր Ներսիսյան գլուխից նախապատրաստական դասարանում։ Այսպիսով Պողյանի տնտեսական դրությունը մի փոքր բարելավվում է։



Հին Աշտարակը։

1859 թվի ապրիլի 18-ին, «Մեղու Հայաստանի» լրագրում լույս ե տեսնում նրա անդրանիկ գրական վաստակը՝ «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանա» աշխարհաբար բանաստեղծությունը, գրված բանառադիմաց գրամատուրք Հակոբ Կարենյանի «Ծառուկ» բանաստեղծության աղղեցությամբ։ «Հուշիկներից» տեղականում ենք, վոր Պողյանը աշխարհաբար լեզվով վլուանավոր և շարադրություններ գրելու փոքր ե կատարել շատ վաղ, դեռևս Ներսիսյան գլուխում աշակետ յեղած տարիներին։ «Զգիտեմ ինչպես յեղավ, գըրում ե Պողյանը, վորտեղից մտքումո ծագեց, մի

անգամ և այն բոլորիս համար առաջին անգամը, յես մեր տեղական բարբառով մի վոտանավոր զրեցի Աշտարակից Թիֆլիս իմ ճանապարհորդությունս։ Վոտանավորն ընկերների կողմից ծաղրի յենթարկվում աշխարհաբար լինելու պատճառով, սակայն հայոց լեզվի ուսուցիչ Հակոբ Կարենյանցը հավանություն ե տալիս, ասելով, վոր Պողյանը ճիշտ ե հասկացել ժամանակի պահանջը և վոգին։ «Այդ որպանից հետո, — ավելացնում ե հեղինակը, — իմ շաբաթական գրած յերկու շաբաթը ություններից մինը գրաբար, մինն աշխարհաբար եր»։

Պողյանին գրողի հոչակ տվեց 1860 թվին լույս տեսած «Սոս և Վարդիթեր վեպը»։ Այդ նշանավոր գործի հղացումը կապված է Պողյանի ստեղծագործության համար մի նշանակալից դեպքի հետ։ 1858 թվի ոգոստոսին, այսինքն այն ժամանակ, յերբ նա Թիֆլիսիում շրջում եր անգործ նյութական ամենածանր պայմաններում, մի յերեկո անձրեկց հալածված, թըրշված մինչև վոսկորները, իրեն մի կերպ ձգում ե համագյուղացի, դիմապահայի վերակացուե ուսուցիչ Հովհաննես Տեր-Հովհանեֆյանցի առնը։ Տան տերը վոտից գլուխ հանդերձափոխում ե նրան, տանում ե իր սենյակը և թեյի հետ մի նոր, Պողյանի համար անձանոթ հայերեն գիրք գնելով սեղանին, ինքը յերկու ժամով գնում ե մյուս սենյակը, իր գիշերութիկ աշակերտների հետ պարապելու։ Արովյանի «Վերք Հայաստանի» վեպն եր դա, մի չտեսնված յերեսության ժամանակական համար։ Դրքի վերնագիրը և հեղինակի անունը վառում են Պողյանի հետաքրքրությունը։ Կլանված ընթերցանությամբ նա չի նկատում թե

ինչպես են անցնում ժամերը... Սթափվում ե այն  
ժամանակ, յերբ գիրքը վերջանում ե: «Դժվար ե ինձ  
պատմել այն տպավորությունը, — զրում ե Պոռշյանը  
«Հուշիկներ»-ում, — և այն հեղինուկ զգացմունքները,  
վոր անդադար ներսումս միմյանց հետևում եյին, մի  
րոպե արտասուք տրտաթախիծ, մյուս վայրկյանին՝  
ուրախության արտասուք, յերրորդ ակնթարթին՝ նըս-  
տած տեղից անհեթեթ վոստվոստումներ: Յես ինչ  
գիտեմ, ինչեր չելին պատահում ինձ. լավ եր տան-  
տերս գնացել եր և մոտս վոչ վոք չկար, ապա թե վոչ  
արժեր կապկապել և հիմարանոց տանել»: Հենց այս-  
տեղ Պոռշյանն ուխտում ե «աշակերտել Արովյանին,  
անմահացնել Աշտարակի անունը: «Անա իմ ձեռքը  
զիմում ե Պոռշյանը Տեր-Հովհեփյանին, յերբ նա  
ներս ե մտնում, յես Արովյանին աշակերտելու յեմ»:  
Նույն գիշեր ընթրիքից հետո նա յերկրորդ անգամ  
ծայրե ի ծայր կարգում ե «Վերք Հայաստանին:  
«Աքաղաղը հինգ բերան կանչել եր, վոր յես տեղս մտա,  
քնիս մեջ շարունակ Աշտարակուն եյի ման գալիս»...

Նյութապես փոքր ապահովվելուց հետո Պոռշյանը  
ձեռնարկում ե իր վորոշման իրագործմանը: «Ծովնկո  
սեղան եցի շինել ու գրում եյի, «Սոս և Վարդիթերն»  
եյի գրում: «Առաջին գիշերը «Սոս և Վարդիթերիս»  
առաջին գլուխը կտրեցի: Վեպի առաջին գլուխը ա-  
վարտելուց հետո ներկայացնում ե Հակոբ Կարենյան-  
ցին, վերջինս մեծ ուշադրությամբ կարգում և խոր-  
հուրդ ե տալիս անպայման շարունակել: «Արովյանը  
փակ լիզուդ բաց արավ, ասում ե նա, շարունակիր,  
չթողնիս: Նա իր Քանաքեռն անմահացըց, դու ել  
քը Աշտարակն անմահացըու» («Հուշիկներ»): Պոռշ-

յանը նոր զարկ ստացած այս խրախուսանքից, շա-  
րունակում ե և 1859 թվի վերջերում ավարտում  
վեպը:

Դեռևս 1856 թվին, Թրիլիսիի գիմազիայի հայ ա-  
շակերտներից և ներսիսյան դպրոցի նորավարտներից  
մի քանիսը կազմել եյին գրական շրջան «Սիրագու-  
մար ժողով» անունով: Խմբակին մասնակցում եր  
նաև Պոռշյանը: Հավաքույթները տեղի եյին ունե-  
նում շաբաթը մի անգամ: «Սիրագումար ժողովը» իր  
գոյությունը շարունակում եր նաև 1859-60 թվերին:  
Խմբակի ղեկավար Յերիցյանի պահանջով Պոռշյանը  
հավաքույթներից մեկում ընթերցում ե «Սոս և Վար-  
դիթեր»-ը, սրանով ել վորոշվում ե գրքի բախտը և  
Պոռշյանի ապագան: Յերիցյանը, հիացած գրքի տպավո-  
րությունից, հաջորդ որը Պոռշյանին ներկայացնում ե  
«Կոռունկ» ամսագրի ապագա հրատարակիչներին: Նրանք  
կո ցնծությամբ են ընդունում «Սոս և Վարդիթեր»-ը:  
«Կոռունկի» խմբագրի՝ Աղարեկյանի առաջարկությամբ,  
վիպասանը թողնում ե դասերը և դառնում ե ամսա-  
գրի խմբագրության անդամ—աշխատակից: 1860 թ.  
հունիսարին լույս տեսավ «Կոռունկ»-ի առաջին համարը,  
վորտեղ սկսվեց տպագրվել «Սոս և Վարդիթերը»: Վեպը  
նույն թվին հրատարակվեց նաև առանձին գրքով:

«Սոս և Վարդիթեր»-ը հոչակեց հեղինակի անունը,  
սակայն նյութապես չապահովեց նրան: Առանձին գրք-  
քով լույս տեսած վեց հարյուր որինակից հարյուր հի-  
մուն որինակ ուղարկվեց բաժանորդներին, մնացածը  
հեղինակի համար բեռ դարձավ և նա ստիպված յեղակ  
հաստատություններին ու բարեկամներին նվիրելով ո-  
ճիքը թափ տալ: «Յերևակայական ցնորդներիս և ինք-

նասիրությանս տեղիք ավեց տխուը իրականությունը. անընթե բցասիրությունը մերայնոց մեջ շոշափելի կերպով կենդանացավ առաջիս և յես կիսահուսահատ սրտակոտոր թողի իմ խմբագրությունը» («Ինքնակենացգրություն»):

Ստեղծագործական վոգեորությանը հաջորդում ե առաջին հուսախաբությունը. Այն շրջանում Պոռշանի գրքի իսկական գնահատողները — գյուղի և քաղաքի աշխատավորները — գեռևս անգրագետ եյին: Նրանց չեր կարող հասնել Պոռշյանի լերկը, իսկ իշխող կղերա — պահպանողական հոսանքի ներկայացուցիչները ամեն ջանք գործ դրին սպանելու «Պոռշյանի» գեռես նոր ծաղկող գրական տաղանդը:

Կղերա-պահպանողական հոսանքի որդան «Մեղուն» առաջինը վաճառառուն բարձրացրեց «Սոս և Վարդիթեր»-ի գեմ: Վեպում նկարագրված Վարդիթերի և Անուշի լնկեղեցում տեղի ունեցած խոսակցությունը սիրո շուրջը «Մեղուն» համարում ե սրբապղծություն և միանդաման անվայել հայ նահապետական գեղակուհին:

Նալբանդյանի վկայությամբ, «Սոս և Վարդիթեր»-ը ժամանակին տեղիք ե տվել բաղմաթիլ անսպաս խոսակցությունների՝ ինտելիցիայի պահպանողական շրջաններում:

Յերբ «Սոս և Վարդիթեր» վեպով հրապարակ յեկալ Պոռշյանը, ասպարեզի վրա կար միայն մի վեպ — դա Արովյանի «Վերք Հայաստանի»-ն եր. Ժողովրդի կյանքից և ժողովրդի լեզվով գրած միակ վեպն երայդ, վոր գարագլուխ կազմեց մեր գրականության մեջ: «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում ուժեղ կեր-

պով քննադատվում եր մեր հին գրականության կրոնական — սխոլաստիկ ուղղությունը: Այստեղ շեշտակի կերպով դրված եր այն ժամանակի համար հրամայական մի ինդիր. դա գրականությամբ ժողովրդին ծառայելու պահանջն եր, ժողովրդի մասին և ժողովրդի համար գրելու անհրաժեշտությունը: Զնայած այս պահանջը առաջին անգամ գիտակցություն գառավ Արովյանի մոտ, սակայն նրա իսկական իրագործողը հանդիսացավ Պոռշյանը, վորի մոտ այն առաջանում ե միանդամայն անկախ և ինքնուրույնաբար: Կարդալով «Վերք Հայաստանի»-ն, Պոռշյանն ասում է, «Յեկ ընչի զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, մինչև լերը մեր գրականությունը գրագետ դասակարգի սեփականություն մնա»: Գրականությամբ ժողովրդին ծառայելու ցանկությունն ե մղում տվել Պոռշյանի ստեղծագործությանը և այս բանում անշուշտ վորոշ գեր և կատարել Արովյանի վեպը:

Մինչև Արովյանի վեպին ծանոթանալը, Պոռշյանը բենավորված եր ժողովրդական կյանքի ու սովորությունների վերաբերյալ չափազանց հարուստ տեղեկություններով: 1856-58 թվերին, յերբ Պոռշյանն ուսուցիչ եր հայրենի դյուդում և Մողնու վանքի գործակալի քարտուղար, նա խորացրեց և ընդարձակեց ժողովրդական կյանքի մասին իր մանկության տարիների բաղմադան տպագրությունները նոր ու հասուն տպագրություններով: Կյանքը ևս հարստացել եր նորանոր յերեսույթներով: Այդ հարուստ նյութը ոգտագործելու առիթ նր պետք. Արովյանի վեպն, այսպի-

սով, յելք ավեց միայն Պռոշյանի մեջ կուտակված պուտենցիալ հնարավորություններին,

«Սոս և Վարդիթեր» վեպի համառոտ բովանդակությունն այս եւ աշտարակցի յերկու յերիտասարդ, Սոսը և Վարդիթերը, ամենաանկեղծ, նվիրական սիրով սիրում են միմյանց։ Աղջկա ծնողներն սկզբում զեմ են լինում այդ սիրուն, սակայն Վարդիթերի անդրանիկ յեղբո՞ւ՝ Սրշավիրի և Սոսի մտերիմ ընկերոջ Գարեգնի աղջեցությամբ Վարդիթերի ծնողներն իրենց վերաբերմունքը փոխում են։ Յերբ արդեն թըվում եր, թե բոլոր խոչընդուաները հաղթահարված են և սիրահարները պիտի հասնեն իրենց փափագին, Սոսի փեսան՝ Տիրանը 15 ոռոքու համար քանդում և արդեն գլուխ յեկած գործը։ Արշավիրը ևս, վոր մի ժամանակ ձգտում եր հաջողացնել Սոսի և Վարդիթերի ամուսնությունը, նպաստում ե գործի խափանվելուն։ Տիրահարները անկարող են լինում տանել այս ժանր հարվածը։ Իրար հասնելու հույսը կորցրած, նըրանք մեռնում են ամենավաղբերգական մահով։ Սոսը խելագագում ե, սարելն ընկնում, Վարդիթերը հիշանդանում ե, մեռնում։ լսելով Վարդիթերի մահվան բոթը Սոսը ևս մեռնում ե։

Վեպի ֆաբուլան, ինչպես տեսնում ենք, նայիվ ե ու սովորական։ Հասկանալի յե, Սոս և Վարդիթերի սիրո ոռմանտիկ պատմությունը չե, վոր արժեքավոր ե դարձնում այս յերկը։

«Սոս և Վարդիթեր»-ը մի վեպ ե, վոր գրված ե 22 տարեկան անփորձ պատանու ձեռքով և այն ել այնպիսի շրջանում, յերբ գրականության մեջ և մտքերի վրա իշխում եր կեղծ գոսական ուղղությունը, յերբ ժողովրդական կյանքը իրական դույներով և զծերով

վերաբտադրելու փորձեր համարյա չկային։ Անխուսափելիորեն այդ վեպը պիտի ունենար խոշոր թէրություններ։ Յեկ իրոք, այնտեղ կան հեղինակի լեռևակայութիւնը ստեղծված բազմաթիվ անբնական ու հնարովի դրություններ, տեսաբաններ ու պատկերներ. սակայն անբնականն ու հնարովին կորչում,



Այս տունը, վորտեղ ծնվել ե Պռոշյանի վեպի հերոսը՝ Սոսը։ Են վեպում պատկերած իրական կյանքի հարուստ և բազմաբովանդակ նկարագրությունների մեջ։ Դրանում յերեսում ե Պռոշյանի դիտելու և վերաբտդրելու ահագին կարողությունը։ «Սոս և Վարդիթեր»-ի արքեքը կայանում ե գլուզական կյանքի և յերեսությների բազմակողմանի և ուեալ նկարագրության մեջ։ Ընթերցողի առաջ պատկերանում ե 40-ական թվականների գյուղն իր առորիայով, իր ուրախություն-

ներով և դառնություններով, դարերով սրբագործված ավանդական սովորություններով:

Պողյանի «Սոս և Վարդիթեր»-ը աշխարհիկ գրականության յերկրորդ հմաքարը հանդիսացավ. Մեծ գեմոկրատ և հեղափոխական Միքայել Նալբանդյանը «Սոս և Վարդիթեր»-ի առաջին ճիշտ գնահատողն է հանդիսացել. Նալբանդյանը նախ և առաջ վեր ե հանել պատմական այն խոշոր դերը, վոր խաղաց «Սոս և Վարդիթեր»-ը, Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի հետ, հիմք գնելով մեր նորագույն գրականությանը:

Նալբանդյանը ցույց ե տվել, վոր Պողյանը գրական ասպարեզ և մտել կյանքի սեալ ձանաչողության հսկական պաշարով. Նա սեալիզմի մեջ և տեսել Պողյանի վեպի արժեքն ու ուժը, հիմնական թերություն համարելով հեղինակի յերևակալությամբ ստեղծված անձատությունները, շեղումները բնականի և իրականի սահմանից: «Սոս և Վարդիթեր»-ի մեջ Նալբանդյանը տեսել է սոցիալական վեպի այն սաղմերը, վորոնցից պիտի զարգանային «Հացի խնդիր»-ը, «Ճեցեր»-ը «Բղդեն»՝ «Հունոն»—Պողյանի ամենաարժեքավոր վեպերը:

«Սոս և Վարդիթեր» վեպում առանձին ուշագրության և արժանի չքավոր գյուղացի Վայկունը: Նա դատապարտում է քեթիւնաների շահասիրությունը, դժգոհում իր վրա դրած հարկերի ծանրություններից, բողոքում նրանց անաղնիվ արարքի դեմ:

«Ես ինչ ա, հիմի խարջ են կիտում, յես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ վոր ինձ կըհասներ խարջը տալու, երկու ենքան են առել, սաքի ասում են, վոր գեղի միջին տարեկան մասրափ (ծախք) ա ելել փչացել

ա, պիտի լրացնենք, համա վորտեղ, քոմմա իրանք են ուտում, քյասիր քյուսութիւն տունը քանդում, իրանցը շինում, յես գրողամնա մի հիքի ունիմ, ինձ տարել են զոռով կապել իրենք հիքիատիրոջ հետ, թեարի խարջ տուր. ել չեն ասում թե, աչառը գոմշի հետ կարա լուծն անի՞», Արշամը դատապարտելով Վայկունը ընդդիմախոսներին՝ Սոսին և Պարետին հաստատում ե նրա խոսքերի ճշմարտությունը, իր կողմից ավելացնելով նոր փաստեր «Վայկուն ափոր խոսքերն ավետարանի կողքին գրված են,—ասում ե Արշամը, —սաքի ինչի՞ եք երկու յերեսանություն անում, կողմապահ ըլում. հիմի ես հո մեր պապական հիքին ա, ուղենան կիւլեն կտան ուրիշին: Փանի՞ քանի՞ որինակներ կան, վոր ընչանք քեզնից մի ոգուտ չեն ունեցել, բանըդ չեն շինել:»

Վայկունը և Արշամը պարզ գիտակցում են, վոր գլուղի ապագա ցեցերը՝ քեթիւնուգեքը ծառալում են. վոչ թե համայնքին, այլ իրենց սեփական շահերին: Հենց դրա գեմ ել նրանք ուղղում են իրենց բողոքը:

Նալբանդյանը վերոհիշյալ փաստին վերաբերվել ե մեծ ուշադրությամբ, հանձին Վայկունի և Արշամի նատեսել ե սոցիալական բողոքի առաջին ներկայացուցիչներին, վորոնց կարիքը այնպես խիստ եր զգացվում այն ժամանակվա մեր մռալլ ու անշարժ իրականության մեջ: Մեծ հրապարակախոսը խորը հրձվանք ե արտահայտել Արշամի նկատմամբ, տեսնելով նրա մեջ նոր ժամանակի մարդուն:

Ուշագրավ ե նաև Տիրանը, Նա Սաքոյի, Բղեյի և Բալասան աղայի նախատիպն ե, Գյուղի սոցիալական զարգացման հաջորդ շրջանում տասնհինգ ոութլով

Քողին ծախող» այդ մասը շահամոլից անխուսափեալիորեն պիտի զարդանային գլուզական ժողովրդի արախում տղրուկները:

\* \*

Պողանը առ ժամանակ թողնում ե գրականությունը և կրկին վերադառնում մանկավարժության բնագավառը. այս անգամ նա փորձում ե իրագործել մի ուրիշ գժվարին՝ ձեռնարկություն—հիմնել աղջկանց դպրոց. «Այն ժամանակ Թիֆլիսում հայ աղջկանց դպրոցի գոյությունն ամենքին ծաղրելի յեր թվում... Հրեշտակոր բան եր թվում ավելի զարդացած ոտարազգիներին, թող թե հաերին՝ աղջկանց ուսումը»:

Առանց յերկուող կրելու գործի գժվարությունից, առանց հարկավոր ոժանդակության ակնկալության, Պողյանն իրեն հատուկ վճռականությամբ սկսում է իրագործել իր վաղուցվա մտադրությունը: Դասերը սկսում ե, ունենալով միայն յերկու աշակերտուհի: Կարծ ժամանակից հետո աշակերտուհիների թիվը հասնում է յերեսունի: Գտնվում են նախանձախնդիր մարդիկ, վորոնք հանձն են առնում դպրոցի հոգաբարձությունը և նյութական ապահովությունը: Յեզ այսպես, հիմնվում ե Գալանյան աղջկանց դպրոցը, վոր առաջինն եր Թիֆլիսիում և ամբողջ Կովկասում: Պողյանի հաջող փորձից հետո, քաղաքի զանազան թաղերում բացվում են նույնանման դպրոցներ:

Զափազանց խոշոր գեր ե կատարել Պողյանը նաև թարոնի առպարիզում: Մանկավարժական աշխատանքներին զուգընթաց նա ձեռնարկում ե Թիֆլի-

սիում մշտական հայկական թատրոն ստեղծելու գործը և այս բանում մեծ ջանասիրություն ու կամք ե ցուցաբերում: Մի խումբ թատերասեր լերիտասարդուների գլուխ անցած, ծեծում ե Թիֆլիսի այն ժամանակավարժությունը աղջկանց դպրոց, վորոնք կարող ելին շատ թի քիչ ոգտակար լինել այդ գործում: Հաշտեցնում ե գժտված, այն ժամանակվա լերկությունավոր հայ գրամատուրգներին, Հակոբ Կարենյանին և Միքայել Պատկանյանին: Հակառակ վերջիններին գիմադրություններին, Պողյանը 1863 թվի հունվարին գլուխ ե բերում առաջին ներկայացումը, վորը չտեսնված հաջողություն ե ունենում: Բեմադրովում ե Պողյանի ձեռքով արարատյան բարբառի վերածած և. Գալֆայանի «Արշակ Բ.» գողբերգությունը: «Հայոց թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիսում» հոդվածում Պողյանը գրում ե. «Այն ինչ խառն բազմություն եր, ասաված իմ, վոր միմյանց գլխի ձկան ծվարի նման ճիլվել ելին, հնարավորություն չկարտում ստանալու, իրար գլուխ են ջարդում, իրար ուսի են բարձրանում: Արիստոկրատ, վաճառական, արհետավոր, կինտո, գատարկաշրջիկ, արկածախնդիր՝ ամենքյան լուսամուտի առաջ բռնած տոմսակ են աղաղում, թղթադրամները ողի մեջ ծածանում են» («Թատրոն», 1893 թ. №-1): Ներկայացումը կրկենավում ե հասարակության գլխավորապես համբարձության պահանջով: Թիֆլիսի համբարձ, իերիտասարդ թատերասերներին ձեռքերի վրա տանում ե ուստաբաշի Զառափ Թիֆոյի տունը, վորտեղ նրանց համար խնջուկք եր պատրաստված: Այս բանն ավելի ևս խրախուսում ե յերիտասարդ թատերասերներին: Ստեղծ-

վում և թատրոնական հոգաբարձություն։ Գործը կարգի յեւ ընկնում։

Միայն զարմանալ կարելի յեւ Պոռշյանի համարձակություն և ինքնավտահության վրա։ Այն ժամանակա դժվարին պայմաններում, յերբ գործունյամարդու ամեն քայլափոխ տասնյակ խոչընդոտի յեր հանդիպում, յերբ անուն և ուժ ունեցող մարդիկ հեռու եյխն փախչում գործից, վախճանլով դժվարություններից, գեռես անհայտ ու անանուն յերիտասարդը կարողանում ե այդքան գործ հաջողացնել և այն ել նյութական մեծ զրկանքների մեջ, կյանքի ամենաաննպաստ պայմաններում։ «Յեթե ընթերցողը կմտածի գտնել սենյակում շենք ու շնորքին կահկարասիր, շատ կսխալվի. թե իմ տունը, թե տատրակի բունը մեկ եր»։ «Վառելիքի սղությունից տունս տաքանում եր յեկող հյուրերի շնչով», իսկ հյուրներ չեղած ժամանակ «գրիչը մատներիս մեջ հարմար բըռնելու համար վառարանի տեղ ծառայում եր ծոցս»։

Պոռշյանի ջանքերով Թբիլիսիում հայ ժողովրդական թատրոն ստեղծելու գործը հաստատուն հունի մեջ մտնելուց հետո, ասպարեզ յեկան նոր և կարող ուժեր հանձին Գ. Զմշկյանի և ուրիշների։ Պոռշյանն այս ասպարեզում իր անելիքն ավարտել եր։

Պոռշյանի հանգուգն բնավորության լավագույններագիրը տվել ե Դ. Աղայանը, վոր նրան գիտեր ավելի լավ, քան մեկ ուրիշը։ Նա գրում ե, «Այդ ժամանակ Պոռշյանցը թեև գպրոցից նոր եր գուրս յեկել, բայց գպրոցականի քաշվող և աֆոթխած բնավորություն չուներ, այլ չափից գուրս յերեսբաց և համարձակ եր։ Նոր սերունդը կյանքի նորոգություն եր պա-

հանջում։ Նորոգության առաջյալ լինելու համար ամոթխածությունը ձեռնոտու հատկություն չեր, պետք եր քաջություն, վստահություն, համարձակություն և մինչեւ անգամ հանդգնություն և ստահակություն։ Պոռշյանցն այս բոլոր գենքերով զրահավորված եր հնության գեմ պատերազմ մղելու համար»։ Իրոք վոր Պոռշյանցը նովատոր եր, նովատորին հատուկ խիզախ բնավորությամբ։

1863 թվին Պետրոս Շանչյանը հրավիրվում ե Շուշվա հոգեոր գպրոցի տեսուչ, վորն իր հերթին հրավիրում ե Պոռշյանին՝ նույն դպրոցի լեզվի գասատու և տեսչի ոգնական։ Տեսնելով Գայանյան դպրոցը հաստատուն հիմքի վրա գրած, գործի շարունակությունը թողնելով ընկերներին, նա մեկնում ե Շուշի այն գիտակցությամբ, թե գավառում գործիչների ավելի մեծ կարիք կա, քան Թբիլիսիում։ Իր առաջին փորձից խրախուսված, ալստեղ ևս Պոռշյանը հիմնում ե աղջկանց գպրոց—«Շուշվա Մարիամյան աղջկանց ուսումնարանը»։ Այս տարիները Շուշվա կյանքում աննախընթաց տարիներ եյխն։ Սակայն, ինչպես ներսիսյան դպրոցում, այնպես և ալստեղ, Շանչյանի ու նրա համախոհների մանկավարժական առաջադիմական—վերանորոգչական գործունեյության գեմ խավարամիտներն սկսում են իրենց գավաղիր գործունեյությունը։ Վերջիններիս ոգնության ե գալիս Եջմիածնի հոգեոր իշխանությունը։ Շանչյանի և նրա գործակիցների բանավոր և գրավոր դիմումները կաթողիկոսին, անհետեվավանք են անցնում։ Շանչյանականների գործը պարտվում ե։

1865 թվին Թբիլիսիում յերկարատեւ և ծանր հի-

վանդությունից Պոռշյանը փրկվում եւ, վորից հետո առողջությունը վերականգնելու համար, ըժիշկների խորհուրդով, մեկնում ե Յերևան։ Այստեղ նա ապրուստի միջոց ե հայթայթում լուսանկարչությամբ։ Ի դեպ պիտի ասել, վոր Պոռշյանը դեռևս 1863 թվին «Կոռւնկ» ամսագրի խմբագրության հաշվով սովորում ե լուսանկարչություն և ձեռք ե բերում գործիքներ։ Պոռշյանին հետազգայում շատ անգամ ե պետք գալիս այդ արհեստը։ Ամեն անգամ, յերբ նա ուսուցչական ասպարեզից զանազան պատճառներով հեռու յերեկո, իբրև հաց աշխատելու միջոցի՝ զիմել ե լուսանը կարչությանը։

1866 թվին Պոռշյանը մտադրվում ե Թավըիզ անցնել, այնտեղ աշխատել մի տարի, ապա մեկնել Հնդկաստան։ Հավանորեն նոր յերկրներ տեսնելու դիտավորությամբ եր Պոռշյանն այդպիսի հեռավոր ճանապարհորդություն կատարելու։ Նույն թվի ճմեռն անց ե կացնում նախիջևանում և Որդուբագում։ Թավըրիզ գնալու համար ճանապարհածախս ե պատրաստում լուսանկարչությամբ։ Միենուն դիտավորությամբ գընում ե Ագուլիս։ Լսած լինելով Պոռշյանի անունը, ագուլեցիք հորդորում են թողնել Թավըիզ գնալու մտադրությունը և տեղում մի կանոնավոր զպրոց հիմնել։ Պոռշյանը համաձայնում ե և մնում։ Սկսում ե գործի նախապատրաստությունը, վորը և արտգ թափով առաջ ե գնում։ Յերկու շաբաթվա ընթացքում 25 հազար ոռուբի նվեր ե ժողովվում բացվելիք յերկու սեռի գլուղոների նյութական ապահովության համար։ Պոռշյանի ձեռքով կաղմման և գյուղական հասարակության ժողովում ե դողովական հասարակության ժողովում հաստատվում ե դողոցների

կանոնադրությունը և ներկայացվում կաթողիկոսին ի հաստատություն։ Այստեղից ել սկսվում ե գործի դժվարությունը։ կաթողիկոսը տհաճությամբ ե ընդունում նրանց։ «Գլխներիս սառը ջուր մաղվեցավ, — զրում ե նա «Հուշիկների» անտիպ ժամում, — ծակումուտների լարած վորոգայթները հաստատուն են յեղել։ Նրանք հաջողացրել են։ Մեծ դժվարությամբ, վերջապես, ստանում են կաթողիկոսի թույլտվությունը զպրոց բացելու վերաբերյալ և վերադառնում։ Թթիւիսից և Յերևանից Պոռշյանը ուսուցիչներ և հրավիրում։ Պարագաներներն սկսվում են և առաջ են զնում մեծ հաջողությամբ։ Բայց առժամանակյա խաղաղությունը շուռուվ վրգովվում ե։ Ագուլիսի փողոցներում՝ պատերին փակցրած՝ Պոռշյանին վարկաբեկող տունակներ են հայտնվում։ Տոմսերի հեղինակները Ագուլիսի տերաբերներն ու տիրացուներն ենին, զորոնք ցանկանում ենին քայլքայել զպրոցը։ Խավարի քուրմերը փորձում են քայլքայել ժողովրդի ձեռքով զլուխ բերված լուսավորության գործը։

1868 թվի սկզբներին Ագուլիսում հայտնվում ե վարդապետ Գևորգ Արամյանը, վոր Ագուլիս եր յեկել խավարամիտ Սարգիս Զալալյանի թելադրանքով, գպրոցը քայլքայելու դիտավորությամբ։ «Դու դրկված ես քայլքայելու այդ ոճի բունը» — գրում ե Զալալյանը Արամյանին։ Նույն նամակում նա այսպես է հորդում իր գործակալին։ «Գործիր, վարդապետ, մեր սկըսածը պատերազմ ե, այդ ֆարմասիոններից մեր պատիվը վոտնատակ գնալու յե մի որ, լեթե ցայսոր չի գնացել։ Արամյանը Ագուլիսից հեռանում ե խայտառակված և անարգված։

Պոռշյանի դեմ լարվող դավերի վերջին հերոսը Ազուշիսում վարդապետ Մեսրոպ Մմբատյանն եր: Այս խարդախ հոգևորականը, վոր ձեանում եր Պոռշյանին «արտակից բարեկամ»: Վորձ և անում վերջինիս և դպրոցի հոգաբարձության միջև գժտություն առաջացնել: Դավագրությունը բացվում ե Սմբատյանը ամոթահար հեռացվում ե Ագուլիսից: Սակայն շատ չանցած նույն Սմբատյանի շնորհիվ ստացվում ե սինողի հրամանը, վորի ուժով Պոռշյանը «իբրև անբարյականացնող, մուռեցնող պայծառամիտ ազուլցիներին» հեռացվում ե թե տեսչությունից և թե ուսուցչությունից: Մինողի հրամանը սպառնում ե, յեթե հոգաբարձուներն ընդդիմանան, սինողը քաղաքական իշխանության կդիմի և կվարվի այնպես, ինչպես ինքն ե իմանում: 1868 թվի հունիսի վերջին Պոռշյանը ընդմիշտ թողնում ե Ագուլիսը:

Գյուղական հասարակությունից սիրված և հարգված ժողովրդական ուսուցիչը չարաշար հալածվում ե կը դերի...

1868 թվի ամառը Պոռշյանը անց ե կացնում իր հայրենի գուղում՝ Աշտառակում: Դեռևս նոր պաշտօնազուրկ յեղած վիպասանին վոգնորում ե գործունեյության մի նոր իդեա: Այդ ժամանակ Աշտարակ գյուղում որինավոր գովրոց չկար: Պոռշյանը վորձ և անում յերկու քահանաների ձեռքով յերկու թայֆայի պառակալված գուռղը միավորել ե մի կանոնավոր գովրոց հիմնել: «Քահանայք միմյանց դեմ ատելություն տարածելով ժողովուրդն ել նույն տրամադբը բության մեջ են պահել: Հասարակական ժողով և գումարվում է կարգացնից կազմ-

ված գովրոցի կանոնադրությունը, ընտրվում հոգաբարձություն, Մական հաջորդ որը, լեռբ պիտի միացնելին յերկու գովրոցների աշակերտներին, վորոնց կը թությունը և զաստիարակությունը մինչ այդ հանձնված եր կիսագրագետ տիրացուներին, Մարիանե լեկեղեցու քահանա Տեր-Սարգսուց՝ կաթողիկոսի ուեակցիոն գաղափարների թարգման նիկողայոս Տեր-Հովսեփյանի<sup>1</sup> գրդումով գործը խափանում ե: Նա մերկացրած սրով փակում է հոգաբարձուների ճանապարհը և սպառնում աշակերտներին սրախողիսող անել, յեթե վերջիններս կհամարձակվեն վոտները գուրս զնել Մարիանեյի բակից: Պոռշյանը սրտաբեկ թողնում ե Աշտարակը և մեկնում Թրիլիսի: Այս դեպքից հետո Պոռշյանը «վատ վարքի» և յեկեղեցուն «վատ ծառալելու» համար զրկվում ե ուսուցչության իրավունքից: Այս և հետագա մի շարք տարիներին Պոռշյանի հիմնական զբաղմունքը լուսանկարչություններ: «Մշակ» լրագրի 1872 թվի № 6-ում տպագրված ե հետեւյալ հայտարարությունը: «Ֆոտոգրաֆ Պերճ Պոռշյանը հայտնում ե յուր շնորհակալությունը Թիֆլիզու հարգո հասարակությանը այն համակրության համար, վոր նա ցույց ե տվել գեղի յուր ֆոտոգրաֆիան: Պերճը հիմի ել պատիվ ե համարում իրեն հայտնել, վոր ինքը ստացել ե արտասահմանից ֆոտոգրաֆիայի նոր դեղորայք և մաքուր պատկերներ հանելու մետողաներ:

<sup>1</sup> Վիպասանը հետագայում Տեր-Սարգսից կերպել ե Միկեան Սաքոյի տիպը, նիկողայոս Տեր-Հովսեփյանից՝ Բալասան աղայի: Այս հանդամանքը, վոր նույնիսկ գրականագետներից շատերին անհայտ ե, Աշտարակում հանրածանոթ փաստ ե:

Նույնպես հաճուռմ և նա պատկերներ և քթի աղլոււ խի վրա բավականի եժան գնով:

Պերճ Պոռշյանը հույս ունի, վոր այսուհետեւ թիֆունիկ պատվելի հասարակությունը չի թողուլ առանց ուշագրության յուր գործարանը, վոր գտնվում է Միքայելովսկի կամբջի վրա»:

Ճակատագրի վորպեսզի հեգնանք: «Թիֆլիզու հարգու հասարակությունը» համակրություն և ցույց տվել վոչ թե վիպասան, այլ լուսանկարիչ Պոռշյանին, վոչ թե «Սոս և Վարդիթեր»-ի անման հեղինակին. այլ քթի աղլուխի վրա նոր «մետողաներով» եժան գնով նկարներ հանողին: Այդ նրանից չեր արդյոք, վոր Պոռշյանի լուսանկարչական ապարատը արտասահմանյան լավ թղթի և գեղորայքի շնորհիվ ընդունակ եր սիրաշահելու հայ բուրժուակի փառասիրությունը՝ ցույց տալով նրա արտաքին փայլը միայն, յերբեմն նույնիսկ հղկելով և կոկելով նրա անտաշ մոռւթը, իսկ վիպասան Պոռշյանի ստեղծագործական ապարատը զուրկ եր այդ հատկությունից և ընդհակառակը ոժաված եր գեղեցիկ արտաքինի տակ թագնված ալլանգակ իրականությունը մերկացնելու կարողությամբ:

1872 թվին Պոռշյանը հրավիրվում է աշխատելու «Մշակ» լրագրին: Արձրունին հայերենին վատ եր տիրապետում և անծանոթ եռ հայ կյանքին, ուստի «Մըշակ»-ը «հայության շավզով» տանելու համար նա իրեն շրջապատում է Հայաստանի զանագան գալառների կյանքին քաջ ծանոթ և հայերենին հմտութարկանցով: Ահա սրանց թվին եր պատկանում նաև Պոռշյանը: Սրանք աշխատում եին անձնվիրաբար, չխնայելով լուսանդ:

սկզբից և յեթ մեծ հաջողություն և ունենում: «Առանց ինչ ակնկալության, հայ գրականությանը ծառայելու միայն մտքով, ցորելը նոքա յուրյանց մի կտոր հացի քամակից են վազում, իսկ գեշերը քունը կտրած մինչև կես գիշեր ևս ավելի պարապում «Մշակ»-ի խմբագրատանը, շատերը մինչեւ տպարանն են վազում, վորը մուր և քսում, վորը սրբագրությամբ և պարապած և վորը տառեր և ցրվում»:

Գրիգոր Արծրունին սկզբնական շրջանում նրանց նույնիսկ խմբագրեներ եր համարում և վոչ լոկ խըմբագրության անդամներ, իրեն վերապահելով պատասխանատու խմբագրի կոչումը: «Դիտնական Արծրունին—իրոնիայով գրում և Պոռշյանը—ամոթ չի համարել յեվրոպական հայացքով գրած հոդվածը յենթարկել մի քանի թերուաների քննությանը. նա յուր ձեռքով գրիչը հանձնել և նույն հայագետներին՝ հայացնելու յուր հոդվածը»:

Արծրունին շուտով ամբապնդված տեսնելով իր դիրքը, սկսեց աստիճանաբար հետ խլել իր աշխատակիցների իրավունքները, խեղդել նրանց ձայնը: Վոգեռությամբ գործին կածած անձնազոհ աշխատակիցների խումբը սկսեց ցրիկ գալ: Պոռշյանի աշխատակցությունը «Մշակ»-ին շատ կարճ ե տեսում: Նա հենց նույն տարին, 1872 թվին, թողեց «Մշակ»-ը: Հեռացան նաև Զմշկյանը և Ամերիկյանը: «Հին թերուաներից—գրում և Պոռշյանը,—միայն Շաֆֆին գլուխը կախ ծանր նըստեց յուր տեղը իրեն վարձկան աշխատակից, վոր վայելեց և անուն ստացավ»:

Հիշյալ ինտելիգենտների հեռանալը «Մշակ»-ից և Արծրունուց պատահական չեր, ինչպես և պատահական

չեր այն հանգամանքը, վոր Բագֆին համակերպվեց «Մշակ»-ին: Պոռշանն իր գեմոկրատական աշխարհաւացքով չեր կարող հաշտության յեզր գտնել լիբերալ հրապարակախոսի հետ: Ասել ե թէ՛ Պոռշանի «Մշակ»-ից հեռանալն ուներ իր սոցիալական խորը պատճառը:

\*

«Մշակ»-ից հեռանալուց հետո Պոռշանը վոգեռվում է կնոջը բժշկուհի դարձնելու մտքով: Այս մտադրությունն իրագործելու համար կամենում է անցնել արտասահման, հույսը գրած լուսանկարչության և բարեկամների ոգնության վրա: Պոռշան ամուսինները սկսում են գերմաներեն սովորել, սակայն կառավարության կարգադրությունը՝ հետ կանչել Ցյուրիխից բոլոր ոռուս ուսանողուհիներին, հուսախարություն և առաջացնում նրանց մեջ: Ինչ խոսք, վոր նրանց այս մտադրությունը յերբեք չիրագործվեց, բայց յերկար ժամանակ նրանցից չեր հեռանում այդ միտքը:

1874 թվի ամառը Պոռշանը հրավիրվում է Հաշտարիան: Այստեղ նա հիմնում է յերկսեռ ծիսական գպրոց: Հաշտարիանում անցկացրած տարիներից նա չափազանց դժոն է: Այստեղ ևս Պոռշանը չի ազատվում խավարամիտների դավերից և հալածանքներից: «Պրոտեստանտ», «անաստաված», «անբարոյական» բառերով ելին վորակվում այստեղ Շանշյանը և նրա աշակերտները: Հաշտարիանից Դ. Աղայանին վրած մի նամակում Պոռշանը գրում է. «Այստեղ չկա այնպիսի ընկերություն, յեղածները մի քանի յերիտասարդներ են, վորոնց քթի ծայրին վորով շուրջով չի հաս-

նիլ, իրենց համարում են բարձր արիստոկրատ և միմիայն կլուբի հերոսներ»: «Կլուբի հերոսներից շըըշանում Պոռշանն իրեն դգում ե բացարձակապես միայնակ: Միաժամանակ նա աչք չի բացում ընտանեկան դժբախտություններից: Նա ձգտում է դուրս պրծնել այդ անտանելի միջավայրից և հարմար առիթի յե սպասում: 1876 թվին սկսվեց հրապարակվել Աբգար Հովհաննիսյանի «Փորձ»-ը: Խմբագիրը մի նամակով դիմում է Պոռշանին, հրավիրելով աշխատակցելու ամսագրին: Խրախուսված «Փորձ»-ի խմբագրի նամակից, Պոռշանը Հաշտարիանում սկսում է գրել «Կովածաղիկ»-ը: 17 տարի գրական աշխարհից հեռացած հեղինակը կրկին վերադառնում է գեղի գըրականություն: 1877 թվին նա թողնում է Հաշտարիանը և տեղափոխվում է Թրիլիսի: Այդ թվին ել «Փորձ»-ում լույս ե տեսնում «Կովածաղիկ»-ը: 1879 թվին նույն ամսագրում տպվում է հեղինակի դլուխ գործոց «Հացի խնդիր» վեպը:

«Սոս և Վարդիթեր»-ից հետո Պոռշանի դիտողության շրջանակներն ավելի ևս ընդարձակվում են, նրա հայացքը յերեւույթների վրա ավելի ևս խորանում ե, նոր յերեւույթներ են գրավում նրա ուշադրությունը. կենցաղային հարցերը մզկում են հետին պլանի վրա և առաջին պլանի վրա յեն քաշվում գյուղական դասակարգերը, նրանց մեջ յեղած փոխարարերությունը: «Սոս և Վարդիթեր» և «Հացի խնդիր» վեպերի մեջ ընկած ե մի ամբողջ քսանամյակ: Սոցիալական շերտավորումը գյուղում արագ թափով առաջ եր գնացել և գասակարգերի մեջ ստեղծվել եր անանցանելի անձըրպես: Առաջացել եր ցեցերի - գյուղական կյանքի

Քայքալիչների մի տհագին բազմություն։ Սրանք պաշտոնամուլ, շահամուլ, կաշառակեր աստիճանավորներն եյին, կեղեքիչ վաշխառուները և իր ստոր գործունեցությամբ առաջիններին գերազանցող հոգեորականությունը։ Սրանք գյուղական աշխատավորության դեմ հանդես են գալիս միասնական ճակատով։ Սրանց մեջ շահերի հակասություն չկա, ընդհակառակը նրանց շահերը խաչաձևվում են։ Առնհարին և պատկերացնել Միկիտան Սաքոյին առանց մովրովի, ինչպես նրա միկիտանիսանեն առանց մովրովի ապարանքի։ Իսկ գյուղական քահանան սրանց գավերի մշտական գործակիցն է։



Գ. Պողյան

Պողյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի «Հացի խնդիր» վեպը։ «Հացի խնդիր»-ը Պողյանի գրական հասուն շրջանի արգասիքն է։ Դա մի գործ ե, վրա բացառիկ արժեք ու նշանակություն ունի ամբողջ հայ վիպագրության մեջ, վորպես սոցիալական խոշոր յերկ։ Ավելի քան յերեք հարյուր հիսուն մեծագիր եղերից բաղկացած այդ ստվար գիրքը մի հայելի յե, վորն իր մեջ անդրադարձրել ե 60—70-ական թվականների Արարատյան դաշտի գյուղերի կյանքը։

Անավասիկ վեպի բովանդակությունը։

Աշտարակում անվանի հարուստ Խեչանանց Խեչանի միակ ժառանգը նրա աղջիկն եր՝ Հեղնարը, վորին հակը մանկուց նշանել եր Սմբատի հետ։ Հեղնարը չնայած աշքի չեր ընկնում իր գեղեցիկությամբ, բայց հարուստ ոժիտի շնորհիվ բազմաթիվ գյուղական յերիտասարդների տենչանքի առարկան եր։ Խեչանի հարստությանը աչք եր դրել նաև Միկիտան Սաքոն, այս վեպի կենտրոնական անձը, «Խեչանի աղջիկը չեմ առնում, նրա մալ ու գովլաթը պիտի լինի իմ կնիկը»— ասում եր նա։ Սաքոն մովրովի (գավառապետի) հետ ունեցած իր բարեկամության ու կապերի շնորհիվ խափանում և Հեղնարի ու Սմբատի պատկը։ Սյունեատեկ զանազան հնարներով փորձում և գլավել Խեչանի սիրաը, շահել նրա համակրանքը. բայց Խեչանը լավ եր ճանաչում «սատանա» Սաքոյին և գիտեր այդ բոլորի բուն շաբառիթը։ Սաքոն փորձում ե ավազակների միջացով փախցնել Հեղնարին, սակայն Հերիքնազը (Խեչանի այբիացած քրոջ աղջիկը, վոր մոր հետ նրա տանն եր ապրում) սպանում և ավազակներից

մեկին և խանգարում նրանց գիտավորությունը։ Այս դրությունից Սաքոն հաջող յելք ե գտնում։ Մարդասպանության մեղադրանքով բանտարկել ե տալիս Խեչանին և վերջինիս բարերար ձևանալով, սկսում ե քամել նրա հարստությունը։ Գալիս ե «արդարադատ» քննիչը և ազատում արդեն գերեզմանի դուռը հասած Խեչանին։ Սաքոն «արդարադատությունից» խույս ե տալիս, անցնում ե Պարսկաստան վորպես պարսիկ կրօնավոր։ Մինչև Խեչանի բանտից դուրս գալը մեռնում ե Հեղնարը, մեռնում ե և Խեչանը։ Սմբատը ամուսնում ե Հերիքնազի հետ և տեր ե դառնում Խեչանի ժառանգությանը։

Վեպի մեջ բոլոր գործողությունների հիմնական առանցքը Սաքոն ե, բոլոր գործողությունները նրա շուրջն են դառնում, նրանից են սկսվում և նրա վրա հանգչում բոլոր դեպքերն ու անցքերը։

Միկիտան Սաքոն առելորավաշխառուական դասակարգի տիպական ներկայացուցիչն ե, նա լավ ե հասկացել կապիտալիստական հասարակության գալիքությունը և ինքն ել զինվել ե գիշատիչի ժանիքներով։ Նրա մանկությունը անց ե կացել իր պես գող ու խաբերա գինեվաճառների գինեաներում։ Սաքոն աշակերտելով նրանց, գերազանցել ե իր ուսուցիչներին իր ճարագիկ խաբերացությամբ։ Ամենուրեք իր շահը հետապնդող, աշխատավորներին հարստահարող Միկիտան Սաքոն նրանց ցավակից և բարեկամ ե ձևանում։ Փող դիզելու տեսչը սրա մոտ ընավորություն ե դարձել, այդ մի կերպ ե, վորի մեջ լուծվում, կորչում են մնացած բոլոր ձգտութեները։ Նրա համար չկան բարովական նորմաներ, վերացել են թուլատրելիի և անթու-

լատրելի սահմանները։ ամեն ինչ լավ ե, յեթե նպաստում ե փող գիզելուն։ Փողը նրա կյանքի նպատակն ե և բոլոր գործողությունների առանցքը։ Վորպես կապիտալիզմի ներկայացուցիչ նա լավ գիտե փողի ուժը։ Փողն ամեն ինչ ե, նա կուռք ե, պաշտամունք, աստված։ Յեվ այդ ամենանզոր ուժին տիրանալու համար Սաքոն միջոցների մեջ խտրություն չի գնում։ «նպատակը արդարացնում ե միջոցը»։ Ստոր դավեր և խարդախ մեքենայություններ հորինելու մեջ Սաքոն անգերազանց ե։

Բնատնտեսության շրջանում արհամարհված փողը այսուեղ չախսնված ուժ և իշխանություն ե ստացել ե այդ իշխանությունը լծի պես ծանրացել ե աշխատավորության վզին։ Արհամարհված փողատերը Պոռշյանի գյուղում կենտրոնական դեմք ե վեպում՝ դըլ խավոր գործող անձ։

Աշխատավոր գյուղացին մինչև կոկորդը իրված երարարքի մեջ։ Մի անգամ վաշխառության ընկնողը այլես փրկություն չունի։ Պարտքը ժառանգաբար անցնում ե հորից վորդիներին։ Հորը խեղդող ողակը խեղդում ե նաև զավակներին։ «Առաջ ով վոր մի թուժման պարտք եր ունենում, քունը չեր տանում ընչանք մի յեզը, յա մի կովր չեր ծախում, իր հոգին թափում։ Հիմի գիտես քանի թուժաններ են անտեր սանագի մեջ գրվում։ Ի՞նչ յեզը, ի՞նչ տուն ու տեղ, ի՞նչ մուլք, վորդին ել վոր ծախի, պրծնում չկա, ըսկել չգիտեմ, թե սրա վերջը ուր պիտի հասնի»...

Ինչպես վերը ասացինք, անհնարին ե պատկերացնել Միկիտան Սաքոնին առանց մովրովի։ Սաքոն գործում եր մովրովի գիտությամբ և աջակցությամբ։

Կապը գավառապետի հետ ավելի մեծ ուժ և համարձակություն ե տալիս նրազործունեցությանը, Զարմանալի սուր դիտողություն ե հանդես ըերել Պոռշյանը այս գեղքում ևս: Նա ցուց ե տվել այդ կապի վոչ պատահական, այլ դասակարգային բնույթը:

Մովլովը տիպիկ ներկայացուցիչն ե ցարական աստիճանավորության, Նա իր պաշտոնի վրա նայում ե իրեն յեկամտի անսպաս աղբյուրի: Կաշառակերությունը նրա մոտ բնավորության գիծ է: Նրա պաշտառանությունից ոգտվում են նույնիսկ ավագակները: Ժողովրդին հարստահարելու համար Սաքոյի հնարած բոլոր մեքենայություններին մովլովը որենքի ուժ ե տալիս: Որենքն ու իշխանությունը մովլովի սեփական շահերին ու բարեկեցությանն են ծառայում: Իր շահերից գուրս չկա վնչ որենք, վնչ իշխանություն: Իշխանությունը մովլովի ձեռքին մասգործի դանակ ե, վորով նա մաշկում ե ժողովրդին: Նա իր բոլոր ապորեն արարքների համար բարձր իշխանության կողմից մնում ե անպատիժ: Իր կողոպուտից առաս բաժին ե հանում մեծավորներին, դրանով ավելի ամրապնդելով իր գիրքը: Այսպիսով Պոռշյանը մերկացնում ե ցարական պետական սիստեմի ամենաղաղելի կողմերից մեկը՝ վարից վեր կաշառքով գերք ամրապնդելը և բարձր պաշտոնների հասնելը:

Վաշխառուներից կեղեքվող գյուղը մյուս կողմից կողոպավում ե իշխանության ներկայացուցիչների ձեռքով: Գլուղացու վողնաշարը ծովում ե հարկերի ծանրությունից: Կոռ ու բեգյառը կրկնակի սոսկալի յեն դառնում մանավանդ մովլովի, լասավուլի, տա-

նուտերի որինազանցությունների շնորհիվ: Նրանք ավելի հանդուպն են դառնում շնորհիվ այն բանի, վոր գյուղացին տգետ ե, որենքից բան չի հասկանում: Գյուղացին ստիպված ե լինում ամեն քայլափոխին իր քսակի բերանը բաց անել: Նրան սովորեցրել են յերեք առանց կաշառքի կամ «նվերի» աստիճանավորի դուռը չգնալ իսկ գյուղացին հաճախ ե գնում որենքի դուռը, հաճախ ե պատահում կառավարության պաշտոնյային: «Խալխումն ել հալ չմաց, յեղը վեր են կացնում, տակիցը հորթը ուղղում, զոռով մարդկանց կովացնում են, վշր մեջտեղը իրենք մոծակի պես ծծեն, արնաքամ անեն. ել վոչ դիվա՞ն կա, վոչ դատաստան, վոչ իրավունք կա, վոչ արդարություն. վերջին մեհտարեցը բռնած ընչանք ինքը մովլովը՝ ձեռը դեմ արած ուղում են: Այս վորտեղից տան, մի մեր գեղի հալը հարցրու կարսափես, վոր լսես. տուն կա, վոր պարտքի տակին թաղված չլինի. Բնչ են ուտում. կերածները, պաս որը ցամաք հաց ա, ուտիսին մի կտոր աղիկսի չոր պանիր, հագածներն ել վոր մի թել քաշես իննը հարյուր կարկատան վեր կընկնի. ախր թե վոր ես կոռ ու բեգյառը չլինի, ընչի՞ համար պիտի պարտքի տակ ճգմվի»: («Հացի խնդիր»):

Ցարական պաշտոնեյության համար գյուղը ավարառության վայր եր, աս մի տեսակ գաղութային թալանի շրջան եր հայ գյուղի կյանքում:

Պաշտոնյան գյուղացու հոգեառ հրեշտակն ե, նրա սոսկ յերեալը ահ ու սարսափ ե աղգում գյուղացուն: Գյուղացու աչքը վախեցել ե, նա յերեք լավ բան չի տեսել պաշտոնյայից և վոչինչ լավ բան չի սպասում: Բոլոր գեղքերում վոտնահարվում են աշխատավորի.

մարդկային տարրական իրավունքները. գյուղացին պաշտոնյայի կարծիքով մարդ չե: Նրան ոռզգի տալն աստիճանավորի համար նույնն է, ինչ լծկան անասունին ծեծելը. Գյուղացու մերկ թիկունքը հաճախ և կապում յասավուլի մորակից:

«Արյունը վազելով ցած իջակ գյուղացու յերեսով և նա գլխիվալը գետնին պառկեց:

— Թեկուզ քոռանաս ել՝ հոգս չի, թե դու սատկած՝ թե մի շուն՝ զուլուղի մարդի համար մին ա, յերկու աքացի ել գլխին իջեցնելով՝ բաց թողեց յասավունընկած մարդուն»... («Հացի խնդիր»):

Այսպիսին ե Պոռշյանի նկարագրած գյուղի պատկերը ընդհանուր գծերով: Հարստահարվող, բռնազատվող, որենքից անտեղյակ, իրավազուրկ, իշխողների քմահաճույքին մատնված գյուղացու կյանքից ցնցող պատկերներ և ստեղծել Պոռշյանն իր վեպում: Նրա ստեղծած վաշխառուների և այլ կարգի հարստահարիչների տիպերն անկրկնելի յեն: Միկիտան Սաքոն, Բալասան աղան, Բղդեն 19-րդ դարի առաջին կեսի մեր իրականության արյունարրու շայլոկներն են, վորոնք հասարակ անուններ են դարձել:

Սուկալի չափերի համառող ձնշումը և հարստահարությունը բնականորեն առաջացնում են ընդդիմադրության փորձեր. դրանք գեռնս թույլ են, աննշան, ավելի բնազդական բնույթ ունեն, քան դիտակցական, բայց և այնպես կան և ապացույց են դասակարգային պատքարի առկայության: Զգացվում ե գյուղական աշխատավոր մասսայի ընդհանուր դժգոհությունը տիքող գրությունից, նրա խուլ, զսպված զայրութը, նրա բողոքի ձայնը տիրողների դեմ: Գյուղական մասսավի

մեջ կան որենքին տեղյակ, հասարակության շահերին նվիրված հատ ու կենտ մարդիկ, վորոնք քննադատում են, բողոքում, ընդդիմադրության փորձեր անում, դրդում գյուղացիներին կոլեկտիվ պատքարի: Պոռշյանը կոչ և անում գյուղացիներից մեկի բերանով և միմյանց քոմակ անել, մի խոսքի լինելու: Գյուղի չքավորության շահերի պաշտպան և հանդիսանում Յաքուլը, վորին վիպասանն ձմբարտախոս ածականն և տալիս: «Են տեսնում եմ, վոր աղքատը շատ ազնվում»—բողոքում ե Յաքուլը ընդդիմ տանուտերին «Աստված ել գիտի,— ասում ե նա, — վոր լես իմ քեֆի գարզը չեմ, վոնց վոր ըլի մեր ջուրը ջրամանիցը կըհանենք, խոսքս աղքատ անձարների համար ա, վոր թոնդիրն ածես՝ շորահոտ չի վեր ըլիլ ու զուք իղձըմտանքներիդ գուռը պինդ կողպած եղուց զլիներին ու պիտի բերեք»: Սա անկյուններում արվող սովորական տրտունջ չե, այլ բացահայտ պայքար:

Գյուղը պանիկ աշխատավորների մի համայնք ե, ուր յեթե չինելին ցեցերը, կիշխեր բարեկեցիկ ու յերջանիկ կյանք: Ցեցերը խլում են արդար վաստակով ձեռք բերած աշխատավորի հացը, զրկում նրան բարեկեցիկ ու յերջանիկ կյանքից: Այս ե Պոռշյանի յեզրակացությունը իր նկարագրած գյուղական իրականությունից: Նա հեռու յե հոսետեսությունից: Ժողովրդի յերջանկության հույսը նա ճիշտ կերպով կապում ե բոլոր տեսակի շահագործողների և շահագործման վոչնչացման հետ:

\*

1879 թվին Պոռշյանը ծանր հիվանդանում ե, վորից հետո սակալ և լինում թողնել թրիլիսին: Հբագիր-

վում և Եջմիածին և նշանակվում Յերեանի թեմի և Ղարսի վիճակի թեմական տեսուչ: Պոռշյանի տեսչության շրջանում բացվում են բազմաթիվ գյուղական ծխական դպրոցներ: Նրա որոք այդ դպրոցների թիվը հասնում է հարյուր հիսուն յոթի: Աշխատանքի թափառական բնույթը նորից նրան զբկում և ամբողջությամբ զբականությանը նվիրվելու հարավորությունից, բայց և այնպես այս տարիներին նա գրում և «Շահեն» պատմական վեպը, վորը լույս է տեսնում «Փորձ»-ում, 1881 թվին: Թեմական տեսչի պաշտոնում Պոռշյանը մնում է մինչև հայկական դպրոցների առաջին փակումը՝ 1885 թիվը, 1885-ից մինչև 1887 թիվը Պոռշյանն ապրում է ամենաթշվառ կացության մեջ: Սովամահությունից խուսափելու համար ստիպված է լինում Յերեսնում առժամանակ ածխավաճառությամբ պարապել Վերջապես 1887 թվին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնով նա հրավիրվում է Ներսիսյան դպրոցը և այնուհետև ընդմիշտ հաստատվում թթվիլիսիում:

Զպիտի կարծել, վոր Պոռշյանի կրած հալածանքները, տառապահնքները և պատառ հացի ամենորյա հոգուը վերջանում են Թթվիլիսի հաստատվելուց հետո: Ամենին վոչ: Դեմոկրատ վիպասանը իր կյանքի ամբողջ ուղին տառապահնքով և անցել Յերբեք նա հալածանքից աչք չի բացել ու հացի խնդիրը միշտ ել լծի պես ծանրացած է լեզել նրա վղին: Նա ստիպված է յեղել ամենորյա հոգնեցնող, բթացնող մանկալարժական ծանր աշխատանքից հետո միայն ձեռքը գրիչ առնել և ստեղծագործել: «Այսոր յես գրում եմ որտեղան հինգ դաս տալուց և շաբաթական հարյուր հի-

սուն—յոթանասուն շարադրություններ տանն ուղղեց հետո, ել ինչ ուժ և հողեկան զորություն ե մը-նում իմ մեջ գրականությանը նվիրվելու գործում ըստ պատշաճին փայլելու»:

Դ. Աղայանը 1889 թվին «Աղբյուր»-ում հարուցելով Պոռշյանի 30-ամյա հոբելյանի հարցը գրում է, «Նա տկարությանը չնայած, իր բազմաթիվ գեղգառտանը պահելու համար հարկադրված է Ներսիսյան դպրոցում վարժապետության պաշտոն կատարել, վորապես զարգեցնե մեր ամենիս չցանկալի մահը: Մեզանից ավելի մի խելացի ժողովուրդ կապահովեր նրան մի թիթե, վորապես իր կյանքի մացորդը բացառապես գրականությանը նվիրե, ճոխացնե մեր ազգատիկ գրականությունը իր արագաշարժ և աշխույժ զրչով, թողնելով վարժապետությունը նրանց, վորոնք լավ վարժապետ լինել կարող են, առանց կարողանալու տալ մեզ մի յերես Պոռշյանցի գրվածից: Բայց Պոռշյանին վիճակված չեր ազդեցու «վաղ» աղատվել տնտեսական հոգսից և ամբողջությամբ գրականությանը նվիրվել:

1889 թվին «Նոր-Դար»-ը և «Աղբյուր»-ը հրապարակ են հանում Պոռշյանի գրական գործունեյության 30-ամյա հոբելյանի խնդիրը, արձագանքում և այդ հարցին նաև «Մուրճ»-ը: Սակայն Արծրունին և Ազգար Հովհաննիսյանը «Ճեցեր վեպի կապակցությամբ Պոռշյանի դեմ կատաղի հալածանք են սկսում, անարշանքի չլսված խոսքեր ուղղելով նեղինակի հասցեյին, հայտարարելով նրա լերկերը զուրկ գեղարվեստական արժեքից: Պոռշյանի հոբելյանն, այսպիսով խափանվում է: Շուտով հրապարակ և հանդում Արծրունությանը նվիրվել:

հորելլանը: Արդար Հովհաննիսյանը փորձում ե այս ևս խոտիանել, և այդ նպատակին հասնելու համար գործիք ե դարձնում Չմշկյանին, փորձելով Պոռշյանին ևս խառնել իր կեղտու գործին: Պոռշյանը հրաժարվում ե իր մաքուշ ձեռքերը ապականել հայ լիբերալ հրապարակախոսների անմաքուր հաշիվներում: Արդար Հովհաննիսյանը հարկադրանքի ամենախայտառակ միջոցներին է դիմում: Նա ներսիսյան գլուխի հոգաբարձուն եր, սպառնում ե Պոռշյանին պաշտոնից աղատել, յեթե վերջինս Արծրունու գեմ զրապարտիչ հողվածներ չդրի: Սպառնում ե «Արձագանք»-ում նրա հասցեյին վարկարեկիչ հողվածներ գրել: Պոռշյանին ուղած 1890 թվի ապրիլի 27-ի նամակում Արդար Հովհաննիսյանը գրում ե: «Յես համոզված եմ, վոր պատվի մասին ձեր հայացքներն ունեցող մարդը, անկարող ե գաստիբարակի պաշտոն վարել վորեւ ուստի նարանական հաստատության մեջ: Յես համոզված եմ, վոր պատվի մասին ձեր գաղափարներն ունեցող վիպասանը իր ժամանակակիցների կողմից չպետք են մեծարանաց արժանանա, վորքան և տաղանդավոր մատենագիր լիներ նա»: Բերելով այս նամակն իր հրատակարանում, Պոռշյանը դառնությամբ ավելացնում ե, «Հեյ անտեր մեան, հացի խնդիր, ստիպված եմ հրատարակության չտալ Արդարի արարքը, հարկադրված եմ արտասուք կուլ տալով բավականանալ հիշատակարանիս թերթերը մըոտելով, մի գուցե առավել գըրզ գըռեմ Արդարին և նրա շնորհիվ ապրուստի միջոցից զըկվեմ»: Այդ հալածանքները Պոռշյանի դեմ Հովհաննիսյանը շարունակում ե նաև 1892 թվին: «Արձագանք»-ում ծաղրում ե Պոռշյանի գաստավանդությու-

նը, «վոր մի որ, ինչպես հոգաբարձու, կարողանա առաջարկել իմ արձակման հարցը, ինչպես արեց յերկու տարի առաջ»: Նշագակության հետեւյալ խոսքերով ե յեղբափակում Պոռշյանը իր խոսքը: «Ամոթ Արդարին և Արծրունուն, ամոթ մեր հրապարակախոսներին, իրենց բոլոր զործողության եյական կետն անձնական շահն ու յեն են արել»:

Լիբերալ ինտելիգենտներն անվերջ դառնացրել ու թունավորել են դեմոկրատ վիպասանի կյանքը, սակայն այդ հալածանքներն անգոր լինան հեղինակի մեջ մեռցնելու գրականությամբ աշխատավորությանը ծառայելու մեծ ձգտումը, մի ձգտում, վարով առաջնորդվել ենա իր գրական գործունեյության ամբողջ ընթացքում:



Վիպասանի սիրած վայրը Պոռշյանների այդում:

1883 թվին սկսվում է հրատարակվել Արամիանյանի «Մուրճ»-ը: Պոռշյանը հրավիրվում և աշխատակցելու ամսագրին: Այս շրջանում են գրված նրա մի քառի նշանակոր վեպերը՝ «Ծեցեր» (1889 թ.), «Բղդե», (1890 թ.), «Սկիզբն յերկանց» (1892 թ.) և Առաջին յերկուսը տպվել են «Մուրճ»-ում:

«Ծեցեր»-ը գրված և «Հացի խնդիր» վեպից տասը տարի հետո: Այդ շրջանի գործերի մեջ դա լավագույնն է և արժանի առանձին ուշադրության: «Ծեցեր»-ը ժամանակին յենթարկվել ե լիրերալ մամուլի խիստ հարձակումներին: «Մշակ» լրագիրը իր պաշտպանության տակ առնելով ժողովրդի արնախում ազգություներին՝ Գնթունիներին, Բալասան ազաներին՝ հայոցանքի և լուտանքի խստագույն խոսքեր և ուղղել Պոռշյանի հասցեյին, անվանել ե Նրան «բուռ», վեպը պասկվիւ, «վեպ» գոյականը առնելով չակերտաների մեջ: Նույն բացասական վերաբերմունքին ե արժանացել «Ծեցեր» նաև «Արձագանք»-ի կողմից:

Զափազանց խոշոր և «Ծեցեր» վեպի գերը իր հասարակական արժեքով և սոցիալական հագեցվածությամբ: Վեպի այս կողմն ե, զոր կծու յե թվացել լիբերալ քննադատների քիմքին:

Ան նրա համառոտ բովանդակությունը.

Ո. գյուղի իգիթ յերիտասարդներից մեկը, Պետրոսինց Սամսոնը, սիրում և Ալեքենց Բարսեղի աղջկան՝ Սոնային և փոխագրձաբար սիրվում նրանից: Նըսանց այգիները կից են, դրա չնորհիվ նրանք հաճախակի գաղտնի տեսակցություններ են ունենում: Սոնան իր հոր յերեք այգիների և ընտիր հողերի միակ ժուռագըն ե: Նա միաժամանակ աչքի յե ընկնում իր ար-

տակարգ գեղեցկությամբ: Սիրահարների ծնողները համակրում են նրանց զգացմունքները և պատրաստ են շուտով ցանկալի բարեկամություն հաստատել լիբերալու ընտանիքների միջն: Սիրո, բարեկամության և փոխաղարձ համակրանքի այդ մթնոլորտում հանկարծ հայտնվում և Խուզոն՝ գրուղի տանուտերը, չարությամբ և անազնիվ հակումներով լեցուն: Ելացած Ալեքենց Բարսեղի այգիներով, վոտնահարելով բարեկամության՝ Հասության որենք, Խուզոն կամենում և Սոնային ամուսնացնել իր վորդու հետ և տեր դառնալ Բարսեղի սեփականությանը, Խուզոյին ամեններն չի հետաքրքրում Սոնայի, նմանապես և իր վորդու զգացմունքները: Խուզոն Սոնային նույնիսկ լիբերեք չի տեսել և այդ նրա փուլթը չե: «Քո մեղաց պարտական ըլիմ, թե աչքս աչքին առած ընի, կամ Կարոցի մաքով անցկացած ըլնի, մլքերի համար եմ ուզում», ասում և Խուզոն Բալասան աղին:

— Ասում են աչքի մեկը կույր ե, տնաքանդ, — հեղնեց Բալասան աղան:

— Տհ, թող քաշալ ել ըլնի: Իր ըաղերի թփիցը կքաղենք՝ գլուխը կծածկենք, իր հավողի պտղները աչք կդնենք:

Խուզոն ունենալով իրեն աջակիցներ Բալասան աղին, Գնթունում և Տեր-Սուքիասին, Սոնայի և Սամսոնի նշանը խափանում ե և մարդասպանության սուտ մեղադրանքով վերջինիս բանտ նստեցնում: Բայց մի անակնկալ գեղք գործի ընթացքը միանգամայն փոխում է: Գտնվում ե Գնթունու հիշատակարանի թերթերը, վորոնցով Բալասան աղի և նրա գործակալների բոլոր մութ գործերը լույս աշխարհ են հանվում:

Գնթունին բանտարկվում և և բանտից փախչում վաճ, Խուզոն զրկվում և տանուտերությունից և ակամա հրաժարվում իր ստոր մտադրությունից, Սամսոնը և Առնան ամուսնանում են:

Այս գեղքերի ֆոնի վրա իրենց քայլայիշ, ավերիչ գործունելությամբ հաւդես են զալիս գյուղի ցեցերը՝ Բալասան աղան, Գնթունին, Խուզոն և Տեր-Սուքիսը:

Բալասան աղան ավանտյուրիստ Միկիտան Սաքոյի և ասեղ ու թե ձախող մանր չարչի Բզգեյի համեմատությամբ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ավելի բարձր ետապի ներկայացուցիչն ե: Նա խոշոր վաշխառու յէ, գործունելության լայն շրջանակով: Բալասան աղան իր բոխ մեջ և սեղմել մի ամբողջ դավառ Նա միաժամանակ բարձր աստիճանավոր ե: Բալասան աղան Սաքոյի և մովքովի սինթեզն ե: Փող դիզելու տեսչի հետ մեկտեղ, նա ունի իշխանության և աստիճանի ձգում, վորին հասել և ստորաքարշությամբ, մեծավորների վոտքերի առջև սողանով: Ո, գյուղացի քաշալ Մեսրոպի տղա Բալոն դասել ե Բալասան աղան նույն գյուղի ան ու սարսափը: Ամենաստոր ճանապարհներով նա հասել ե հասարակական սանդուխքի բարձր աստիճանին: Փողի և պաշտոնի ուժով նա ստրկական հնագանդության մեջ ե պահում գյուղի հասարակությանը: Մի գյուղացի արագեստ և պատճառաբանում հասարակության հնագանդությունը Բալասան աղի հանդեպ. «Մարդու հինգտաս շահի յենք պարտք առել՝ ճռւտեր ա հանել, մեր վրա պատկեր տակից դուրս չենք կարող գալ, մեղա-

վոր սկերեսի պես լեզուներս կարճ ա, առաջին գլուխ ներս ծուռմ ենք, եգուց, ելոր ունեցածներս տուկի (աճուրդ) կկապի կծախի...»: Փողն ու իշխանությունը նրան զարձրել են դոսող, ամբարտավան, իշխանակեր և անհանդուրժող:

Բալասան աղան տասնյակ ու հարյուրակոր թելերով կապված ե գյուղերի հետ: Ունի իր գործակալները գյուղական ազգաբնակության մեջ, վորոնք դավաճանում են համայնքին ի նպաստ աղայի շահերի, ակնկալելով միաժամանակ իրենց անձնական շահը: Տանուտեր Խուզոն ալդպիսի հարաբերության մեջ ե Բալասան աղայի հետ: «Հիմի դու ինձ գլամի շինի, ահս վոնց եմ տարին չբոլորած վիշիկան մանեթները առաջիդ կիսում, ահս հինգ տաս մանեթով վոնց եմ քեզ հազարներ աժող բաղերի ու մին հարիր արդում (արդյունք) տվող հողերի տեր շինում», խոստանում ե Խուզոն Բալասան աղին: Բալասան աղին հաճակ միջամտում ե գյուղական համայնքի գործերին: Գործ դնելով իր ուժն ու ազդեցությունը՝ գյուղական գործերում առաջ ե քաշում իր շահերին նվիրված մարդկանց: Այսպես, համայնքի կամքին հակառակ նա Խուզոյին տանուտեր ե զարձնում: «Իստակ յերեխանց տակի փալասն ել դուրս կքաշի», — ասում են գյուղացիք նրա մասին:

Տաճատ Գնթունին մի կատարյալ ավանտյուրիստ ե, Միկիտան Սաքոյի պատճենը: Նա Վարագա վանքում յեղել ե Խրիմյանի աշակերտը և այնտեղ սովորել ե ճեռագրեր կեղծել: Այդ «արհեստը» նա գարձրել ե ժողովրդին կեղծելու միջոց: Գնթունին կեղծ մուր-

հակներ և կազմում, ստորագրություններ և կեղծում և ուրիշ շատ խարդախություններ կատարում: Բալասան աղի բոլոր մեքենայությունները նրա ձեռքով են անցնում: Գնթունին դատարանի գրադիրն և և գյուղի վարժապետը: Միաժամանակ նա պարապում է վաշխառությամբ, հարստանարելով թուրք և հայ աշխատավորությանը:

Պոոշյանն ստեղծելով Գնթունու տիպը, ջարդ ու փշուր և արել ուսեցրած այն հմայքն ու մեծարանքը, վոր լիբերալներն ստեղծել եյին Խրիմյան «Հայրիկի» և Վարագա դպրոցի շուրջը: Այս հանգամանքն եր, վոր այնպիս կատաղեցրեց Պոոշյանի լիբերալ քըննադատներին, վորոնք փրփուրը բերաններին չլսված խոնքեր շպրտեցին «Յեցեր» վեպի և նրա հեղինակի հասցեյին:

Տանուտեր Խուզոն, Բալասան աղեն և Տաճատ Գընթունին միասին սուրբ յերրորդության նման մի բան են կազմում: Տանուտեր Խուզոյի մասին ժողովրդական առածն ասում են: «Գողը տանից լինի, յեզը յերդիկից կհանեն»: Դուքս գալով բուն ժողովրդից, զավաճանում և նրա շահերին, ոգնում ժողովրդի թշնամիներին, նրա հարստանարիչներին: Խուզոն հետապնդում և միայն իր անձնական շահը: Հարստանալու, դիրք ստեղծելու, ժողովրդի վրա իշխանություն ձեռքբերելու ձգտումով են պայմանավորված Խուզոյի բուլոր գործողությունները: Նա քսու յե և ստորագրաւ Բալասան աղի գարշապարը լիզելով, նրա քմահաճոյշքին ծառայելով, ոգտվում են նրա հոգանավորությունից՝ աստիճան ու դիրք ձեռք բերելու համար: Խու-

զոն վորպես իշխանավոր քիրտ և, վայրենի ու կաշառակիր:

Տեր-Սուլքիասը Պոոշյանի բնորոշումով Միկիտան Սաքոյի յերկվորյակն ենրա հետ մի հորից և մի մորից ծնված: Նա գյուղական քահանայի սովորական տիպ եւ: Տեր-Սուլքիասները չեն ծառայում վորսե սկզբունքի, նրանց դավանանքը սեփական գրպանն և և ստամոքսը:

Սըանք են գյուղի քայքայիչները, վորոնց մի ընդհանուր անունով Պոոշյանը ցեցեր և անվանում:

«Յեցեր»-ում նույնպես գյուղական աղդաբնակությունը բողոքում եւ, տրտնջում իր վիճակից: Պարտքի տակ ճգմված պարտատիրոջ ցանցում խնճված գյուղացին լիբերենն համարձակություն և ունենում բողոքելու նրա անարդարացի պահանջի դեմ, թեկուզ և այդ իրեն շատ թանգ և նստում: Դյուզացի Սարոն Բալասան աղին հետեւյալ խոսքերն և ուղղում, կամենալով արդարացնել պարտքը ժամանակին չտվող գյուղացիներին: «...գարունքը գալիս ա մատներիս միսն ուտում ենք, գիշեր-ցերեկ շոն նման տանջվում ենք... Ելի երեխեքը տկըր, ելի մի կտոր ցամաք հացի կարու, մեր ա գնում, ինարկե քո հրամանոց քիսան ա մտնում: գլուխ քարովը տվի, քեզանից հարյուր հիսուն մանեթ վեր կալա, ես ա հինգ տարի լա, հինգ ենքան տվել եմ, դեռ հինգ հարյուր ել կա, ել թնչ ես ուղում: խալից գնում են բաղ են տնկում, հողագործության մեջ կյանք ու արև են մաշում, տավար, վոչիսար պահում, արեի տակին, սարի թմբին, գող ավագակի, գել ու զագանի հետ են կովում, թե ինչ ա մի կտոր ցամաք հաց գտնեն իրենց յերեխեքանց համար.

դու ամառը յայլաների հովումը, ձմեռը գոգոան բաւ-  
խարու կողքին՝ փափուկ բարձի վրա թինկ ես տա-  
լիս, ել գյուղացու վրա միտք ել չես ցալացնում, հի-  
մի ել յեկել ես յերկու վոտներս մի մաշիկի դնում,  
բողազներիս չոքել ես, թե՝ տվեք. հեր որհնած, մեզ-  
նից ել լավ կթի կովեր, վոչխար չենք բաս ինչ ասու-  
ծու կրակն ենք: Բրդներս խուզի, մլքիդ յեկայու-  
տը անհնձել տուն ածա, պատրաստ բրդած կերակրի  
գլխին նստի ու աստծուն փառք տուր»: Գեղը կանգ-  
նի գերան կկոտրի—ասում ե մի այլ գյուղացի, հոր-  
դորելով համագյուղացիներին դեմ քվեարկել Բալասան  
աղի առաջադրած տանուտիրական թեկնածությանը:  
Նույն վեպում Սիսակը համառ ու անհաշտ կոփի ե  
մզում Բալասան աղի ու նրա արբանյակների դեմ,  
մերկացնելով նրանց մեքենայությունները: Սիսակը  
գյուղի շահերին նվիրված մի կրթված յերիտասարդ  
ե: Սա ինտելիգենցիայի այն խավի ներկայացուցիչն  
ե, վորի սրտին մոտ ե ժողովրդի շահը—նրա բարեկե-  
ցության, յերջանկության ձգտումը:

Պոռշանի վերջին նշանավոր դորձը «Հունոն» ե, վո-  
րը նույնպես տպագրվել ե «Մուրճ»-ում (1900 թ.):  
Չափազանց ուշագրավ ե Պոռշանի ստեղծագործության  
վերջին շրջանի այս վեպը, սրա հետ մեկ տեղ նաև  
«Մեր Խեչոն» պատմվածքը Հունոն և Խեչոն Պոռշա-  
նի կողմից իգեալականացված ավազակներ են: «Հա-  
րամակերների մսակեր Հունոն» ավազակ չե սովորա-  
կան իմաստով, նա հալածվում ե ցարական իշխա-  
նությունից, վորովհետո հանդինել ե պատժել զոսքա-  
յի անիրավացի արարքը, պաշտպանել իր սերը, իր  
պատիվը: Դյոգչեցի անվանի հարուստ Մելիք Մրտոյի

տղա Զաքոն չի ճանաչել աղքատ Հունոյի իրավունքը  
սիրո խնդրում, նա վորձել ե հարկադրաբար Հունո-  
յին հեռացնել չքնաղ Գյուլոյից և բանությամբ տի-  
րանալ գերջինիս: Հունոն չհանդութելով անսանձ հա-  
րըստի անիրավությունը սպանել ե նրան, հափշտա-  
կել սիրածին, հանձնել մոր խնամքին ու ինքն այ-  
նունետն ավազակ ե դառել: Իր մասին Հունոն ա-  
սում ե.

«Յես կողոպտում, սպանում եմ խեղճ գյուղացու քըր-  
տինքը լափողներին, անտեր անտիրական վորբերին  
քերթողին, շահին շահ առնողներին, դողին, ավազա-  
կին, աղամորդու հայտնի ու թագուն թշնամիներին,  
խարերաներին, նրանց, վարոնց տունը բերնե բերան  
լիքն ե ու մի հատ փող, մի հատիկ ցորեն իրենց աշ-  
խատանքով չի ներս յեկել աստծու ստեղծած ան-  
բաղդների գառն աշխատանքի պտուղներն են»:

Այսպիսով Հունոն իրեն պարզ հաշիվ ե տալիս իր  
արարքի համար. նա լմբոնում ե իր «ավազակության»  
սոցիալական բովանդակությունը:

«Մեր Խեչոն» պատմվածքում վիպասանը դրում ե,  
«Վորաեղ աղքատի բերանից պատառ խլող, շահին  
շահ առնող, ժլատ հայ ու թուրք կային. ինչ տեղ  
իրենց ուսաթին զրկող, նեղացնող կալվածատերեր  
կային, ինչ տեղ հոգիք գաղի ծերին չափող բազազ-  
ներ, կշնորում հարամություն անող հացածախներ  
կալին, կյանքները լորի պոչի պես կարճանում եր,  
դժոխքի բաժին ելին լինում: Մեր Խեչոն իր ձեռքով  
եր եղպիսիներին գնդակախորով անում, կամ վզները  
կարմիր թել կապում (մորթել):

Հունոն և Խեչոն զենքը ձեռքներին պաշտպանում

են հավասարապես թուրք ու հայ աշխատավորներին, դրա համար նրանք սիրված են ժողովրդից: Իշխանությունից հալածված Հունոն ապաստան և գտնում աշխատավոր ժողովրդի մոտ: «Վոչ միայն հայ գյուղերում Հունոն ամենքի գլխի վրա տեղ ունի, — ասում ենրա մասին մի աշխատավոր զյուղացի, — այլև նույնիսկ աշխատասեր թուրք զյուղերում... Յես խոսում եմ վիզն արևոտ, հողագործ, դառն քրտինքով իր ցամաք հացը ճարող թուրքերի մասին»:

Հունոն ու Խեջոն տարբեր ազգությունների աշխատավորության կողմից ճանաչված ու սիրված, նրանց շահերին նվիրված մարդիկ են: Նրանք ժողովրդի բարեկամներն են, իսկ հարստահարիչների արնախում թըշնամիները: Յարական իշխանության կողմից տաֆանակիր աշխատանքի գատապարտված Հունոյի մասին հեղինակն ասում ե. «Ի ցայլ Գեղարքունի գավառի թուրք ու հայ ճնշված ու հարստահարված դասակարգի, Սիրիրի ճանապարհն ե բոնել»:

Վեպը կառուցված ե սոցիալական հաստատուն բազայի վրա: Հունոյի պայքարը, զա հարստահարվողների պայքարն ե իրենց հարստահարիչների դեմ, զա աղնիվ աշխատավորի բողոքն ե իրտ ու յեսամոլ հարուստների դեմ: Վեպի հերոսը դասակարգային գիտակցության յեկող գյուղի աշխատավորության տիպական ներկայացուցիչն ե: Հունոն իր հայրենի լեռներից ձեռք ե պարզում քաղաքի աշխատավորության շահերին պաշտպան Պետոյին ու նրա հետ մեկտեղ բողոքում իշխողների ու շահագործողների բռնության դեմ:

«Աշխարքումս մի և տվել արդարություն, դութ,

խղճմատանք, — ասում ե Հունոն իր մենախոսության մեջ — աշխարքումս արդարն ու լավը նաև լի, ով քսակումք վոսկիք, ձեռքին իրավունք ունի, արդարը, լավ անունի տերն ու բարերարը նա լի, ով իրենից անզուրին, իրենից իեղմին մըջունի պես վոտքի տակը կըքի, կըճխլի, ճխլիկը հիանի ու գլուխը բարձր բըռնած՝ իր արածով կպարծենա, աշխարհքը նրա գովքը կանի, նրա առաջին խունկ կծխի»:

Ժողովրդի մարդիկ, նրա շահերի արտահայտիչները թեկուղ թույլ են պատկերված, հաճախ ստվերի պես հայտնվում և չքանում են, թեկուղ հետևողական չեն իրենց պայքարի մեջ (Հունոն վերջիվերջո հանձնվում ե իշխանությանը), հաճախ զուրկ զասակարգային խուրը գիտակցությունից, բայց և այնպես նրանք վորոշ չափով արտահայտում են իրենց ժամանակի պայքարը:

Պողյանը վերոհիշյալ նշանավոր վեպերից զատունի նաև բազմաթիվ մանր պատմվածքներ և պատկերներ, թե առանձին գրքով լույս տեսած և թե պարբերականներում տպագրված: Տպել ե նաև մի շաբք թղթակցություններ զանազան ստորագրություններով կամ անստորագիր:

Պողյանը կատարել ե թարգմանություններ ուսու և յեկրտական հեղինակներից, վորոնցից նշանավոր են և Ծոլստոյի «Մանկություն և պատանեկություն», «Կովկասի գերին», Զարլի Դիկկինսի «Դավիթ Կոուպերֆիլդը» և այլն:

\* \* \*

1899 թ. մայիսի 16-ին Թբիլիսիում Մարկոս Պողյանյանի նախաձեռնությամբ տոնվում է Պողյա-

Նի գրական գործունեյության 40-ամյա և մանկավարժական գործունեյության 44-ամյա հորելյանները։ Նույն թվին Պոռշյանն ազատվում է պաշտոնից և դառնում Ներսիսյան դպրոցի թոշակառու։ Վաչ հորելյանից ստացած գումարը և վաճառքակը, վոր տրըվում եր ։ ատ անկայոն, չեն ապահովում հեղինակին նյութապես։ 1904 թվին Սմբատ Շահազիզին ուղղած նամակում Պոռշյանը գրում է. «Ապրես, Սմբատ ջան, լավ ժամանակին հասցրիր, բնակարանի յերեք ամսվա վարձի համար մնացել եյի տարակուսած։ Առածը զիտես՝ մուկը ծակը չեր մտնում, ցախավելն ել պոյիցը կապեցին, գոյն չեցինք Ներսիսյան դպրոցի ստացածս ամսական 50 ռուբլի կենսաթոշակավ, այս ել ոգոսութից սկսած ընդհատվեցավ և մնացինք «անարյուն ճպանց նման զողս ծծելով» կարծեմ, ըստ Յեղիշեցի»<sup>1</sup>։

Դառն ու վողբերդական եյին Պոռշյանի կյանքի վերջին տարիները, կնոջ մահը, վոր տեղի ունեցավ 1905 թվին, և ավագ վորդու՝ Պոռշի Սիրիր աքսորվելը՝ հեղափոխական գործունեյության համար, ծայրահեղ հուսահատության հասցրին նրան։ Միանդամից նա կորցրեց նախկին կենսուրախությունն ու աշխուժը։ Անհամբեր մահվան եր սպասում, տառապում եր մենակությունից, Թափառում եր վայրից վայր, 1907 թվի հոկտեմբերին Պոռշյանը Թբիլիսիից

<sup>1</sup> 1892 թ. Մուկվայում տոնվեց բանաստեղծ Ս. Շահազիզի 30-ամյա հորելյանը։ Հորելյանից գոյացած գումարներից ստեղծվեց «Արովյան-Նաղարյան» դրական ֆոնդը, վորի նպատակն եր ոգնել կարիքավոր հայ հեղինակներին։ Պոռշյանը ևս նպաստ եր ստանում վերսիցաւ ֆոնդից։

Աշտարակ ե մեկնում, վերջին անգամ իր սիրած և անմահացրած ծննդավայրը տեսնելու, Քասախի գետի ջուրը խմելու և ապա հանգիստ սրտով իր հայրենի հողում գերեզման իշնելու։ «Դնում եմ մեռնելու, իմ շիրիմս պետք ել լինի Աշտարակում, իմ մայրանուննդ գյուղում»—ասում եր նա մտերիմներին։ Բայց այս տեղ ևս Պոռշյանը հանգիստ չի գտնում։ Յեցերի Աշտարակը սատն և գիմավորում նրան։

Պոռշյանը հայրենակիցներին առաջարկում և հասարակության հաշվով շինել իր համար մի սենյակ, վորը նրա մահից հետո կլիներ հասարակական գրադարանի սեփականում և Աշտարակի հասարակական գրադարանին նվիրել իր հարուստ գրադարանը և իր հեղինակությունների ժառանգական իրավունքը, վորը պետք բերեր տարեկան լեռեք հարյուր ռուբլի յեկանուտ։ Պոռշյանի խնդիրքը անուշադրության և մատնվում և նա միքանի որ անց կոտրված սրտով թողնում և Աշտարակը։ Կրկին վերադառնում և Թբիլիսի, այստեղից հիվանդ վիճակում մեկնում և Բագու և ապաստան և գտնում իր վեսա Ստեփան Տիգրանյանի տանը։ Հիվանդությունը որ ավուր ծանրանում և Ավելի յե ծանրացնում Պոռշյանի վիճակը նրա միայնակ և մոռացված լինելը։ «Եսպես ել բան կլինի, —դանդապավում և անվերջ նա, —իմ բազմաթիվ ծանօթներից վահ վաք, վահ վոք չի այցելում ինձ և չի մխիթարում ինձ։ Կարսու եմ կենդանի խոսքի... կարծես Սահարայի անապատում եմ»։ Պոռշյանին աեղափոխում են հիվանդոց, ուր և նա մեռնում և 1907 թվի նոյեմբերի 23-ին (ըստ տոմարով), առավոտան ժամը 8 և 30 բո-

պելին, 70 տարեկան հասակում։ Դիակը տեղափոխվում է Թքիլիսի և թաղվում՝ Առջիվանքի գեղեզմանոցում՝ կնոջ կողքին։



Պողյանն իր ընտանիքի հետ։

Տասնյակ տարիների հեռավորությունից մերաշքերի առաջ այսպես ե կանգնում նա, աչքաբաց, ժիր, ուշիմ, զարմանալի ընդունակ և ուսումնասեր մի պատանի, չքավորությունից ու մշտական կարիքից անբաժան, խճճված այն ժամանակվա սոսկալի իրական սության սարդուտայնի մեջ՝ վորից հուսահատական ճիկերով մի կերպ դուրս ե պրծնում ու վոտք դնում

կյանքի տատասկոտ ուղին... ապա խիզախ ու գործունյա յերիտասարդ՝ նոր մտքերի ու ձեռնարկումների համարձակ հղացող ու գործադրող, վոր անդուլ մաքառում և տղիտության ու նախապաշարմունքի գեմ, հաճախ պայքարից դուրս ե ընկնում խոցոտված ու արյունոտված, բայց միշտ հաղթական... վերջապես՝ ֆիզիկապես քայքալված, բայց աշխույժ ու կենսուրախ մի ծերունի իր բազմանդամ ընտանիքի նյութական հոգալ ուսին—սիրող հայր ու ամուսին, վաստակած, բայց չգնահատված հեղինակ ու հասարակական գործիչ։ Վերջում՝ միայնության դառն ու հուսահատական որեր ու տանջալից մահ։ Այսպիսին ե բեղմնավոր վիպասանի անցնած՝ աղքատության, զըրկանքների, հալածանքների ու դառնությունների 70-ամյա ուղին։

Պողյանի ստեղծագործության հաստաբուն կաղնին աճել և զարգացել ե ժողովրդական կյանքի արդարագանդ հողի վրա, նրա հյութերով և սնվել և փարթամացել։ Պողյանը բառիս իսկական իմաստով ժողովրդական զրող ե, ժողովրդական կյանքի հարազատ արտահայտիչ, իր ստեղծագործությամբ կապված ժողովրդական—աշխատավորական լայն մասսային, նրա մտքի և հոգու աշխարհին։ Ժողովրդական կյանքի հարազատությունը—գեմոկըսատիզմը, վորպես վորակ հայ նորագույն գրականության—վիպագրության մեջ առաջին անգամ հանդես բերեց Պողյանը, իր ստեղծագործության մեջ առնելով և զարդացնելով Աբովյանի «Վերը Հայաստանի» վեպի գեմոկըսատական տարրերը, հակադրվելով նրա նացիոնալիզմին։ Աբովյանի վեպը խարսխված չեր ժողովրդական կյանքի վրա, իր հիմ-

նական տրամադրությամբ հեռու յեր նրա կյանքից ու վոգուց: Ասկայն Արովյանի վեպը միաժամանակ ուներ ժողովրդին հարազատ, ժողովրդից յեկող տարր: Դա նախ և առաջ ժողովրդական կենդանի լեզուն եր, Քանաքեռի բարբառը և ապա Քանաքեռի կենցաղի—սովորությունների մի քանի կողմի իրական նկարագրությունը: Արովյանի վեպի այս տարրն ե, վոր անցել և Պոռշյանին, նրա ստեղծագործության մեջ զարգացել վորակ և դարձել:

Անցյալում լիբերալ քննադատության կողմից կամ բոլորովին մոռացության և արվել Պոռշյանը կամ լավագույն դեղքում համեմատության մեջ դրվելով Արովյանի հետ՝ ստորագասկել ե, համարվել անշնորք, անտաղանդ, վերջնիս ուժն ու խորությունը չունեցող: Պոռշյանի ստեղծագործությունը չի ընդունվել և չի ճանաչվել վորպիս նորորակ արժեք, վորպիս նոր ձուծում հայ նոր ագույն գրականության գանձարանը:

Շարունակելով լիբերալ քննադատության գիծը, մեր որերում Պոռշյանի ստեղծագործությունն արժեքազրկելու փորձ են կատարել նացիոնալիստ—հակահեղափոխականները: Ժողովրդի և նրա ստեղծած կուլտուրայի թշնամիների միտումն այստեղ արտահայտվել և իր ամբողջ մերկությամբ: Նվաստացնել, վարկարեկել անցյալի գետուղարական կուլտուրայի խորշություն արժեքները—ահա թե վորն եր այդ միտումը: Գյուղագիրների (Պոռշյան, Աղայան) մասին արտահայտած Բաֆֆու արհամարհական կարծիքը, պարզ ե, վոր բաժանում ելին նացիոնալիստները, վորքան ել նրանք կամենալին քողարկել այդ: Պոռշյանի նըշկատմամբ նրանք ճգնել են ցույց տալ, վոր դեմոկ-

րատ վիպասանը կղերա-ֆեոդալական հոսանքի արշահայտիչն ե:

Պոռշյանի յերկերն անշուշտ հեռու յեն գեղարվեստական կատարելությունները լինելուց, նրանք հաճախ մեղանչում են արվեստի պահանջների դեմ, յերբեմն փաստերը, ինչպես ավելորդ բեռ, ճնշում, ծանրացնում են վեպը, չեն մեկնաբանվում, չեն լուծվում, յերկի սյուժեի ընդհանուր կառուցվածքի մեջ ու մնում են վորպիս սոսկ լուսանկարչական փաստեր, նրա գաղափարախոսությունը նույնիսկ զերծ չի պահպանողական և նացիոնալիստական վորոշ արրերից, այսուհանդերձ Պոռշյանն իր ստեղծագործությունների ամենաարժեքավոր մասով հանդիսանում է զուղական դեմոկրատիայի լավագույն իդեալի ամենաարագատ արտահայտիչներից մեկը: Դրանով ել նա մոտ ու հարազատ ե մեզ:

Հայկական Խորհրդապային Սոցիալիստական Հանրապետությունը և նրա հետ մեկտեղ նոր Աշտարակը, մեծ շուրջով տոնում են տառապանքով վաստակած, բայց անցյալում չգնահատված հոչակավոր վիպասանի ծննդյան 100-ամյակը և մահվան 30-ամյակը: Յերախտավոր հեղինակը վերջապիս դաշվ իր իսկական գնահատողներին այնպիսի հասարակակարգում, ուր լուծված ե անիծյալ «հացի խնդիրը» և վերացված և մարդու շահագործումը մարդու կողմից:



ԳԵՐՃ ՊՈՌՇՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԿԵՐՆ  
ԱՌԱՋԻՆ ԳՐԲԵՐՈՎ—

1. «Առա և Վարդիթեր» Լույս և տեսել՝ 1860 թ. Թիֆլս, 1887 թ.  
Եկրան, 1903 թ. Բագու:
2. «Աղասի» (Վոզբերգություն). 1863 թ. Թիֆլս:
3. «Կովածաղիկ» 1878 թ. և 1879 թ. Թիֆլս:
4. «Հացի խնդիր» 1880 թ. Թիֆլս, 1904 թ. Բագու:
5. «Շահնշան» 1883 թ. Թիֆլս, 1905 թ. Բագու:
6. «Յեցեր» 1889 թ. Թիֆլս:
7. «Բղե» 1890 թ. Թիֆլս:
8. «Մկրպն յերկանց» 1892 թ. Թիֆլս:
9. «Հուշեկներ» (ա. շլջան). 1894 թ. Թիֆլս:
10. «Ակցիզի» (պատկեր) 1896 թ. Թիֆլս:
11. «Նայ» (պատկեր). 1896 թ. Թիֆլս:
12. «Միքան աղենց Արդուլը» (զբույց). 1896 թ. Թիֆլս:
13. «Մեր Խեչոն» (զբույց). 1899 թ. Թիֆլս:
14. «Յեղի Մկրտչնց տունը» (պատկեր). 1899 թ. Թիֆլս:
15. «Հունոն» 1901 թ. Թիֆլս:

Թարգմանություններ


1. ՏՈՂՄՈՅՑ, Լ. Կովկասի գերին. 1894 թ. Թիֆլս:
2. ՄՈՒԳՈՄԵՐ. Եկրան յեղայր. 1895 թ. Թիֆլս:
3. ԴԻԿԿԵՆԾ. Դալիթ Կովկասի Փիլդ. 1897 թ. Թիֆլս:
4. ՍԼԻՎԻՑԻ. Խորամանկ ազգեսը. 1898 թ. Թիֆլս:
5. ՏՈՂՄՈՅՑ, Լ. Մանկություն և պատահեկություն. 1899 թ. Թիֆլս:
6. ԳԻՄԻՏՐԻՑԵՎԱՆ, Վ. Մանչուկն ու Կուտիկը. 1899 թ. Թիֆլս:
7. ԶԱՍԻԿԱՅԻ առաջին աղոթքը. 1899 թ. Թիֆլս:
8. ՈՃԵՇԿՈ. Ե. Յասի արկածքները. 1900 թ. Թիֆլս:
9. ԳՈԳՈԼ. Ամուսնություն. 1904 թ. Թիֆլս:
10. ՎԵՐԵՍԱՑԵՎ, Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը. 1905 թ. Թիֆլս:
11. ԻՎԱՆՈՎԻՉ. Ավոյենց Ստեփանը. 1910 թ. Թիֆլս:



4084

ԴԼավլիսի լիազոր 9241 պատկը 1134  
Հրատ. 4296 տիրաժ 4000

Գետհրատի տպաքան, Եկրհան, Լենինի փ., № 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0389199

70-854

